ԾԻԼՆ ԱՒԱՐԱՅՐԻ

Ա. ՏԱՐԻ 1866 ԹՒԻ Թ.

ՍԵՊՏԵՄԲԵՐ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

ՇԻԼԼԷՐԻ ԿԵԱՆՔՆ ՈՒ ԻՐ ԿՈՎԼԻԷԼՄ ՏԷԼԼԸ

ՆՈՒԷՐ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ
ԱՂԱՍԵԱՆ
ՑԱՐԳԵԼԻ ԱՆՏՕՆԻՆ ԵՒ ՆԱԶԵԼԻ ԹԱԳՈՒՀԻՈՅՆ
ԹԱՐԳՄԱՆՈՂԻ ԿՈՂՄԷՆ

ՇԻԼԼԷՐԻ ԿԵԱՆՔԸ

(Շարունակութիւն. Տես Թիւ Ա. երես 22 Թիւ Բ. երես 85.)

Սակայն, իր դպրոցական պարտականութենէ դուրս եղած բոլոր ուսմունքը, վարժապետներուն խիստ վերահսկողութիւնը և այն պատիժն որ միշտ ապառնալիքէն յետոյ էր գալիս, օրէ օր աւելի ատելի էին անում Շիլլէրին դպրոցի բնակութիւնը։ Մի անգամ էլ յիրաւի մաքումը դրաւ փախչիլ դպրոցէն, բայց վախենալով՝ որ մեծ իշխանի ժիգոհութիւնն իր ծնողացը դլխին կընկնի, մնաց։ Մնաց՝ բայց անդադար ինքն իրան հետ մաքառելով և այն դժուարին կռուին դիմանալով, որ էր հոգւոյ ցանկութեան մարմնոյ կարիքի հետ արած

կուիլը։ Թէ որ իրան համար նշանակուած գրքերէն ուրիշ գրքեր կամենար կարդալ, պէտք էր, որ իր պառկած խցի ամենէն մութ խորը քաշուեր և այն տեղ կուչ եկած կարդար։ կամ թէ պարտիզումը մի ծառի քամակը թաղուն պահուում էր։ Իր ոտանաւորները գրել կարող լինելու համար էլ մի և նոյն բանն էր։ Երբեմն էլ հիւանդ էր ձեւանում ստէն և այն ժամանակ նրան թոյլ էր տուում, որ դիշեր ժամանակ մի ճրագ ունենայ իր կողէնքի կշտին։ Էլ մնաց՝ թէ ինչ ուրախութիւն կը լինէր իրան համար երբ ծարաւի դիտութեան և բանաստեղծութեան ճաշակն առնելու, հանդստութեամբ կարող պիտի լինէր կարդալ առանց ահ ունենալու, որ իր սիրած գրքին ամենէն դեղեցիկ տեղը պիտի չկանդնի։ Բայց բոլոր այս անմեղ խորամանկութիւնքը, մի այնպիսի հոգւոյ համար որ ճնշուած էր իր յուղմանցը մէջ և կանդնեցուցած իր միտութեանցը մէջ անյաջող հետեւանք էին ունենում միշտ ուսումնասիրութեան անդադար հսկողութենէն։ Մի օր Շիլլերի դասընկերներէն մէկը՝ գնում նրա սենեակը, տեսնում է որ նա մին մինակ նստած լաց է լինում, նրա ձեռնէն առել էին Շէքսբիյրն ու բոլոր միւս դրականական գրքերը։

Ա.յսպէս, Շիլլերի հոգին խռոված, դլուխը տաքացած և սիրտը մի անտանելի համբերութեան դառն դդացմունքներով լիքն էր ուսումնարանական բռնավարի կարգերէն ու կանոններէն, երբ իր Ա-ոաջինները գրեց։ Ա.յս թատրոնական քերթուածի դէպքը վերը էր առնուած ՍՈՒԱՐԻՈՅ ՇՏԵՄԱՐԱՆ անուն հանդիսէն, որ մի ծեր մարդու իր որդեմէն ազատուելուն պատմութիւնն էր, որուն իր որդիութենէն մերժելով իրմէ հեռացուել էր։ Ա.յս սոսկալի Տրամայի ամեն մի տեսիլը, հետեւանք էր, բռնի ճնշուած մի վառվռուն երեւակայութեան, ամեն տեսակ նեղութեան, տարկութեան դէմ մի անհնարին ատելութեան դդացմունքի, մի շատ այլանդակ և չափազանց դաղափարների այնպիսի մի ընկերականութեան վրայ, որու մէջ նա ամենեւին ապրած չունէր և մի զօրաւոր հանճարու, որ դուշակում էր արդէն այն բաների մի մասն, որոնք երբէք չէր տեսել և չէր փորձել ու իր երաղած ընկերականութեան կեանքը, կենդանութիւնը ու իրականութիւնն էր տալի։ Հինդ վեց տարուց յետոյ հեղինակն երբ անդորը սրտով քընն

նում է իր երիտասարդութեան այս առաջին գրաւոր գործը, շատ լաւ մեկնում է իր խելքի վիճակն, որու մէջ գտնուած ժամանակ այդ գործը շինել էր։ Իր բուն խօսքերն այս տեղ յիշելուց առելի լաւ բան չենք կարող անել։ «Գրում եմ, ասում է նա, ինչպէս մի աշխարհաքաղաքացի, որ ոչ մի թագաւորի ծառայութեան մէջ չէ, շատ վաղ եմ կորուցել իմ հայրենիքն, որ փոխանակէն այն ընդարձակ աշխարհին հետ, որուն միմիայն խաշորացուցի ապակու քամակէն էի ճանաչում։ Բնութեան մի մոլորութիւն դատապարտեց ինձ քերթող լինել հէնց իմ ծնած տեղն. իմ բանաստեղծութեան վրայ ունեցած սէրը, դալչում էր ուսումնարանի կարգերին, որուն մէջ կրթուեցայ և հակառակ էր նրա հիմնադրի խորհրդներին։ Ութ տարի շարունակ իմ եռանդուն սէրը կռուի մէջ էր զինուորական կարգերի և կանոնների հետ։ Բանաստեղծութեան սէրը սատակիկ ու վառուն է մարդուս առաջին անգամ զգացած սիրոյն նման, ինչ բան որ այդ սէրը պիտի հանգցունէր (մարէր) աւելի բռնկցուց։ Ինձ՝ այս տանջող վիճակէն ազատելու համար իմ սիրտը թռաւ դնաց մի երևակայական աշխարհի մէջ։ Բայց չէի ճանաչում իսկական աշխարհը, որմէ երկարէ պատնէշներով բաժանուած էի. մարդիկը չէի ճանաչում, վասն զի այն չորս հարիւր արարածներն որոնք իմ չորս դէնն էին, ամենքն էլ հէնց նոյն և մի արարածն էին, նոյն և մի օրինակէ դուրս հանուած. չէի ճանաչում դեռ ինքն իր ազատ միտութեան թող տուած մի էակ, վասն զի միայն մի միտութիւն հաստնացաւ իմ մէջ և այս միտութիւնն ինչ որ էր, չեմ կամենում ասել հիմա։ Կամեցողութիւնս միւս ղօրութիւնքը թմբրեցնում էր, մինչդեռ նա զարգանում էր ինքն իրան ջղերիս հետ միասին։ Ամեն առանձին հանգամանք, բնութեան մարդուս միտքը յափշտակող զանազան ու զարդարուն ամեն մի պատկեր կորչում էին իմ ենթակայ եղած կաղմուածի միակերպ շարժողութեան մէջ։ Կանայքը չէի ճանաչում, վասն զի այն ուսումնարանն ուր տեղ որ ես փակուած էի, այն ժամանակ մարդ կը մնանէ, երբ կանայք դեռ մի ցանկալի բան չեն և այն տեղէն դուրս կը դայ, երբ էլ կը դադարին ցանկալի լինելուց։ Մարդկանց ու իրանց ճակատագրի վրայ ունեցած ազիտութեանս մէջ, հրեշտակի ու

սատանայի մէջ տեղն եղած սահմանադիծը ի հարկէ պէտք էր դուրս գար իմ գրչէն. 'ի հարկէ իմ գրիչը պէտք էր, որ մի հրէշ ծնէր, որն որ բարեբաղդութեամբ երբէք աշխարհումն չդտնուեցաւ և որն որ կամենում էի մշտնջենական անել ինչպէս մի օրինակ արարչագործութեան հպատակութեան և հանճարոյն անճոռնի միաւորութենէն ծնած։ Ա.-ալֆիերի մասին եմ ասում։ Ա.յս քերթուածն երեւեցաւ։ Ամբողջ բարոյական աշխարհն ամբաստանեց քերթողին նրա մեծափառութեան թշնամանելուն։ Ա.ին երկինքն որու տակ այդ գրուած քը լոյս տեսաւ իր արդարանալուն միակ պատճառն է։ Բոլոր այն անհամար ամբաստանութեանցմէ, որոնք դուրս եկան Ա.-ալֆիերի համար, միայն մինը կը դպչի ինձ. այն է՝ որ համարձակեցայ նկարագրել մարդիկն երկու տարի յառաջ նրանցմէ ոչ մէկին չտեսած »։

Ա.յս քերթուածը թագուն գրուեցաւ, ինչպէս Շիլլերի միւս փորձերն էլ և կտոր կտոր իր բարեկամներին կարդացուեցաւ, որոնք հիանալով ընդունեցան։ Ա.յդ հատուածը վերջացել էր, երբ հեղինակը դպրոցէն դուրս էր եկել ըստ բաց դունդը մտնելու իբրեւ վիրաբուժ։ Ա.յս ժամանակ քսան ու մէկ տարեկան էր։

Շիլլերի այս նոր դրութիւնը ոչինչ բան էր, իր թոշակը 18 ֆիորինէն աւելի չէր տանէնը, բռնադատուած էր մի սաստիկ կանոնաւոր ծառայութեան մէջ։ Բացի սրամէն, պէտք էր, որ միշտ ներկայ գտնուէր զօրահանդէսների մէջ և շատ տխուր մի կերպարանք ունէր իր Պրուսիական շքազգեստովը երկու կողմէն դոլորած մազերովն ու երկար պոչովը. բայց առաջին անգամն էր, որ այն աշխարհին մէջն էր մտնում ուր այնքան ցանկացել էր մտնել։ Ազատ էր Շիլլեր ու իր ազատութեան առաջին դործածութիւնն ահ տուաւ իրան սիրողներին։ Ցանկարծ այն բուռն նեղութենէն ազատուելով՝ որն որ այնքան տարի քաշեց, մարդկային կեանքին առաջին հրապուրէն բռնուեցաւ, իր կրակուած բնութեամբը յափշտակուեցաւ և մի ծայրէն միւս ծայրը անցկացաւ, սարկութենէն դէպի անառակութիւն. դժբաղդութեամբ մի դեռահաս տեղակալի հետ էր բնակում, որու սիրտը շատ ժամանակէ հետէ մոլի էր մի անկանոն վարքով։ Ա.յդ մարդը

գ-ժուարութիւն չ.քաշեց Շիլլերի ամիսորդ խելքի վրայ տիրելու և նրա վրայ մի վատ ներգործութիւն արաւ։ Մի և նոյն տանը մէջ բնակում էր և մի պաշտօնական որբեվարի կինը, որ ոչ սիրուն էր և ոչ էլ մատաղ և որու համբաւն էլ կասկածելի էր։ Բայց առաջին կինն էր, որու մեր քերթողն իր ճանապարհի վրայ հանդիպում էր, իսկականութիւն էր այդ՝ մի երկարատեւ երազէ յետոյ, մի կենդանի պատկեր, այնքան անորոշ և անյայտ պատկերներէ յետոյ, որոնք իբրեւ մի ուրուական անց էին կացել իր մտքէն։ Շիլլեր այդ կնոջ տաներին ընկաւ, առաջին սիրոյ բոլոր կրակովն ու պաշտեց նրան և երգեց նրա վրայ։ Այդ կնոջն էր որ Լ.ա անունը տուաւ, դրան էր՝ որ իր երգերն ուղղում էր, որոնց մէջ մարդկային բաղդին և բնութեան պատկերները խառն էին սիրոյ հիացողական ատուածքների հետ։ Թէ այս կինն իմացաւ և յարդեց մի այդպիսի սիրոյ բորբոքում, չենք կարող ասել։ Թէ որ Շիլլերի բարեկամների վկայութեան հաւատալու լինենք, կասեն թէ՝ այդ առաջին սէրը պղատոնական էր միայն և միշտ յարգողութեան սահմանումը մնաց։

Մանկամարդ վերաբուժին սոսկալի մոլորութիւնն ու խենդումենդ շռայլութիւնը բարեբաղդութեամբ քիչ ժամանակ տեւեց։ Ստուրտկարտ դեղեցիկ և վտանգաւոր քաղաքի մօտ, որ իբրեւ մի պչրան կին դէպի իրան էր քաշում իր կեղծ հրապուրովը Շիլլերի անմեղ և միամիտ հոգին, կառուցուած էր այն Անապատ անուն քաղցր կացարանը և այն ապառաժների կշտին, որոնց մէջ միսել էր նա իր դիւրաբեկ նաւակը, իր ծնողական բունն էր, որ իր մոլորութիւնքն իրան յիշեցնում էր մայրենական սիրոյ քաղցր յանդիմանութեամբ։ Այս տեղ Շիլլեր աղատեցաւ իր մոլութեանցմէ, որոնց մէջ ինքն իրան ձգել էր բոլոր սրտով, մի քանի հանդարտ օրեր անցնելով իրանների մօտ և նրանց մէջ մի ուրախ և անվրդով պարզ կեանք տեսնելով, մեղմացուց իր սրտի կրակը և տեսաւ ինքն իրան այն վտանգը, որուն մէջ ընկել էր։ Այսպէսով Շիլլեր դադարեցուց իր պարսաւելի յարաբերութիւնքը և իր պարտականութիւնքը ճանաչեց։

Սակայն այն մի քանի ամիսներն, որ աշխարհի մրրիկների մէջ էլ անցուցել իր դանձու վիճակը տակն ու վրայ էին ա-

րել և պէտք է ղորդն ասել, որ քառասուն հինգ ֆիորինի մի ելեւմուտքի հաշիւ ամենը, դժուար չէ խառնիխուռն ասել։ Շիլլէր իր տրաման դեռ պահած էր իր մօտ, այդ իր փորձաքարն էր, որն որ դործ ածել էր կամենում իր հանճարոյն ճշմարիտ արժողութիւնը փորձելու համար։ Դրա վըրայ էր նոյնպէս դրած իր յոյսը մի ճար անելու իր փոքրիկ եկամտի ծակ ու ծուկին։ «Թէ որ Սուաբիոյ Ստատլին բանաստեղծը, դրում էր նա իր բարեկամներէն մէկին, իր ոտանաւորների համար ստանում է թերթին մի տուդադ, չեմ կարող յուսալ ես էլ մի ոյնքան ստանալու մի ողբերդութեան համար։ Հարիւր ֆիորինէն աւելին քան է։

Հարիւր ֆիորին քսան քսաներկու տարեկան քերթողի մի դործին համար։ Ճշմարիտն ասելով Շիլլէրի ուղածը քիչ էր։ Իր բարեկամներն որոնք այն ժամանակէն հետէ, որ նրա հետ միասին դպրոցումն ապրել էին, նրան ակնածութեամբ էին նայում միշտ և իրմէն աւելի էին ուրախ իր տրամայի համար, ուստի սաստիկ վրայ ընկան որ լուսումն հանէ այն և կամեցան էլ օդնական լինել դրա հրատարակութեանը։ Նրանցմէ մինը մի մանրամասն բովանդակութիւն չինեց, մի ուրիշը դիծադրեց ինչպէս խորհուրդ այս զայրացողական տրամային համար, մի կատաղի առիւծ այս խորհրդանշանով (ՆԻՇԱՆՆՈՒ), բայց Շիլլէր երբ այդ տրամայի համար մի հրատարակող վնտռելու եղաւ, մի ողորմելի հեղինակի ամենվշտերն ու նեղութիւնքը քաշեց, նրա համար որ իր անծանօթ անունը դեռ մի երաշխաւորութիւն չէր տալ շահախնդիրներին։ Փոխանակ հարիւր ֆիորին ստանալու իր քերթուածին համար, պարտաւորեցաւ ինքն իր ծախքովը տպել տալ։ Իր բարեկամներէն մէկն իրան համար երաշխաւոր եղաւ հարիւր յիսուն ֆիորինի և Ա-ՍՔԻԷԲԸ դուրս եկաւ հին տառերով վատ ու թուխ թղթի վրայ տպուած։ Շիլլէր Մանհէմի Շուան դրքածախին մի քանի հատ ղրկեց խնդրելով նրամէն, որ բարեհաճի դրուածքը տարածելու և ինչ ուրախութիւն եղաւ քերթողին համար, երբ մին օր մի նամակ ստացաւ նոյն Շուանէն, որ իրան իմաց էր անում իր ցոյց տալն այդ տրաման Պարոն Դալբերդին, որ Մանհէմի թատրոնի Ցնօրէնն էր, և թէ Դալբերդ յանձն էր առնում

խաղալ տալ, թէ որ հեղինակը հաճելու լինէր մի քանի մանր մունր բաներ փոխել կամ ուղղել։ Այս յաջողութեան Շիլլէր երբէք չէր համարձակիլ յուսալ, այս մի բարեբաղդ արդիւնք էր, վասն զի Մանհէմի թատրոնը շատ լաւ անօրինուած էր և իր մէջն ունէր Բօքի և Իֆլանտի նման դերասաններ և որն որ այն ժամանակ Գերմանիոյ առաջին թատրոններէն մինն էր։

Շիլլէր, անմիջապէս թղթակցութիւն անել սկսաւ Դալբերգի հետ. սա իրան ցոյց տուաւ մի քանի տեսիլներ Աստղինէրէ որ կարօտ էին փոփոխուիլ և մի քանի անձինքների բարքի նկարագիրը չափաւորել։ Շատ փորձեր և ուղղութիւնք անելուց յետոյ, հատուածն ընդունուեցաւ և իրարու խօսք տրուվեցաւ և առնուեցաւ մօտ ժամանակին խաղալ տալու։

Այն ժամանակներն որ Շիլլէր աշխատում էր այսպէս իր տրամային նոր ձեւ տալու, պատրաստում էր մի բանաստեղծական ծաղկաքաղ, որն որ 1782 ին հրատարակուեցաւ։ Այս ծաղկաքաղն մի հաւաքածու էր ընարերդական այլեւայլ վիպասանութեանց մեծ մասով պատանիներէն յօրինուած։ Շիլլէրի յօրինած վիպասանութիւնքը կերպ կերպ դլխագրերով էին ստորագրուած, որանք այսօր հաղիւ կը դտնուին և մինք էլ երբէք կարդացած չունինք։ Բայց Գերմանացի բանաքննիչների ամենքն էլ կասեն թէ՝ շատ փոքր արժանաւորութեամբ բաներ են։ Հեղինակն ինքն էլ է քամահրում դրանք իր ամբողջ գործերէն դուրս թողելով։

Նոյն տարւոյն Յունուարի 13 ին կարդում էին Մանհէմի ճանապարհների դլխին մեծ մեծ տառերով մի ծանուցում։ Աստղինէրը, դրամա հինգ արարածոյ, կրքա-որոշած ընտրական բեմի համար է, Շիլլէր։ Դալբերգ այս ծանուցումի տակին աւելցուցել էր մի երկար բացատրութիւն այն տեսակէն որ խորհուրդների դերասանները յառաջուայ ժամանակ բեմի վրայ բանաճառում էին հասկացնելու համար ժողովուրդին խաղացուելու հատուածի դէպքերի ընթացքն ու բարոյական մասը։ Այս տրամայի ներկայացումն շատ ժամանակէ հետէ ծանուցուած լինելով Մանհէմ քաղաքի մէջ բազմաթիւ հանդիսատեսներ էր ժողովել, Հէյտելբերդէն, Ֆրանքֆորդէն, Մա-

եանսէն և բոլոր հարեւան քաղաքներէն շատ հետաքրքիր-ներ ոտով կամ ձիով կամ կառքով էին գալի։ Հէնց առաւօտէն թատրոնի դռներն ու ներս մտնելու ճանապարհները բաղմութեամբ լիքն էին։ Ներկայացումն պէտք էր հինգ ժամուն սկսուիլ և վերջանալ տասին։

Շիլլէր հրաման էր խնդրել Մանհէմ գալու, բայց չէին տուել նրան այդ հրամանը, և ասել էին նրան կարի խոտութեամբ, որ պէտք է աւելի զբաղի իր բժշկական պարտականութեանց թէ որ չէր կամենում բռնութեանց միջոցներն իր վրայ դառնան։ Այս սպառնալիքը չէր կարող նրան ահ տալ այնպիսի մի կարեւոր հանգամանքի մէջ. ուստի Շիլլէր թաղուն վեր կացաւ գնաց ու աչքովը տեսաւ իր տրաման որն որ հիանալի կերպով լաւ խաղացուեցաւ, բաղմութեան ծափահարութիւնքն լսեց և յետ դարձաւ հարբած իր յաջողութեան վրայ։

Իր թատերական խաղէն եղած տպաւորութիւնը քաղքէ քաղաք ծաւալւում էր։ Ամեն տեղ իր անունը յիշւում էր բաղմութեան բերնումը, իր գրուածքն ամեն խօսակցութեանց առարկայ էր դարել։ Շատ շուտով Գերմանիայում հեղեղի նման մի շատ տրամաներով լեցուեցաւ, որոնց գիւղացունքը բանուկ ճանապարհների շնորհալի աւազակներն էին և Լէյպցիկումն էլ երիտասարդների մի ընկերակցութիւն գտան, որոնք դիտաւորուել էին Բոհեմիայ անտառներումը քաշուիլ աւազակների ազնիւ պաշտօնը վարելու համար։ Մի եւ նոյն ժամանակ մի շատ դատարկապորտ և հարցախնդիր մարդիկ իրարու վրայ Շիլլէրի տունն էին գնում. սրանք այն կարդէ մարդիկ էին, որոնք քաղքէ քաղաք վազ կը դան մի բանով իրանց կիրքը գոհացնելու, կարծելով իրանց դատարկապարտութիւնը ազնուացնել մի հռչակաւոր բան տեսնելով։ Ամեն օր Շիլլէր մի նոր այցելու էր ընդունում իր տանը, երբեմն մի շնորքով ճամբորդ աշխարհման, որ կամենում էր սրահներումը դեռահաս բանաստեղծին դէմքը, կերպը, հագուստը նկարագրել և երբեմն էլ զդայուն սրտով մի կին, որ բոլորք էր բառնում, դանդատ էր անում բաղդին անիրաւութեան և անգթութեան դէմ, տեսնելով ողորմելի սենեակն ու աղքատիկ կահն ու կարասիքն այն մարդուն, որ այնքան լաւ

էր իմանում քաղցր արտասունք թափել տալ մարդուս աչքէն։

Թէ որ այս անպտուղ մեծարանքը Շելլէրի սնափառութիւնը չոյում էր, շուտով պէտք էր որ քթէն դուրս գար։ Արդէն Ա-ալինէրը իր վրայ մի բեռն էին դրել, այսինքն, մի պարտք որն որ չէր իմանում ինչպէս պիտի վճարէր։ Ամբողջ տպուածքը ծախուել էին, բայց շահը գրքածախին դրպանումն էր մնել։ Ծաղկաքաղի հրատարակութիւնն էլ այս պարտքը աւելացուցել էր և ցաւալին այն էր, որ մեծ իշխանը, որմէ Շելլէր բոլորովին կախում ունէր ինչպէս և իր ընտանիքը Ա-ալինէրի արած չըբլկոյէն յանդիմանութիւն էր արել իբրեւ անբարոյականութիւն պարունակող մի գրուածք։ Զարակամ մարդիկ էլ նրա ականջին հաղեցուցին թէ այդ թատերական խաղի մէջ շատ դպչելու ակնարկութիւնք կային իր արքունեաց դէմ։ Շելլէրն էլ ինքն արդէն ճգռացուցել էր իշխանին իր մի չինած երգովը մի պաշտօնակալի մահուան վրայ։ Շատ անմեղութեամբ երկու տող գրուած բան Ա-ալինէրի մէջ նրա բնաւորութիւնը տրաքեցուցին։ Երկրորդ ապարուածքի մէջ Սպիկելբերդ իր քաջութեան արիութիւնքը պատմելիս, ասում էր իր բարեկամների մէկին թէ՝ «վեր կաց դնա՛ Գրիզոնների երկիրը, դա՝ այսօրուայ աւազակների Ա-թենքն է»։ Մի Գրիզոն այս առարկայի դէմ մի սաստիկ յօդուած գրեց ՀԱՄԲՈՒՐԳԻ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ անուն հանդիսումը։ Վալտէր անուն մարդուն մինն էլ, որ յատուկ թշնամին էր Շելլէրի և յոյս ունէր ձեռք բերել Գրիզոնների մէջ քաղաքացիութեան իրաւունք, դորձին մէջ խառնուեցաւ և մեծ իշխանի առաջը հանեց ամենասուտ դուներով։ Մեծ իշխանը կատաղած, հրամայեց Շելլէրին բանտ դնել, սպառնալով թէ որ նորէն մի գրուած տպել տալու լինի բացի բժշկական գրուածէն և ամենեւին դրսի հետ հաղորդութիւն չունենայ, այլ բոլորովին իր պարտականութեանց ճիշդ կատարմանը համար զբաղի։

Այս հրամանը խեղճ դրագետի գլխին կայծակի նման խփեց։ Ոգեւորուած իր Ա-ալինէրի յաջողութենէն, ուրիշ բաներ էր երազում գրել։ Իր բարեկամներէն երկուսին հետ միասին սկսել էր դրականական ժողովածոյ հրատարակութիւնը և մի քանի եղերերգութիւնք ու բանաքննական ճառեր

գրել և արդէն խօսելու վրայ էր Դալբերդի հետ իր ներկայացնելու տրամայի մասին, որ էր Ֆէլէտէ դա-ֆանոլ-ինը և ահա յանկարծ առանց քննութեան և չափաւորութեան մի ուստիկ դրաքննութեան ենթարկուեցաւ ու դատապարտուեցաւ իր հանճարն իր մէջ ջնջել և ձեռը վեր առնել իրան փառք, ուրախութիւն և յոյս բերող բաներէն և փակուիլ ստրկութեամբ միակերպ աշխատութեան նեղ կեդրոնումը։

Մի փոքր յետոյ, Շիլլէր աւելի ծանրացուց իր յանցանքը, նորունց թագուն ճանրորդութիւն անելով Մանհէյնէն։ Այս անգամ մեծ իշխանը լսեցաւ և նրան արդելան դրաւ սաստիկ յանդիմանալով։ Շիլլէր ուրաը նեղութեամբ լիքը պարոն Ֆալբերդին դիմեց։ Յոյս ունէր որ այս մարդն, որ իր ծընունդովը ու վիճակովը ազդեցութիւն ունէր, կարող էր իրան համար միջնորդ լինել մեծ իշխանի մօտ և մեղմացնել այն վճիռն, որով արդիլում էր իրան դրել, ուստի այս խնամով մի երկար ու սիրտ շարժող նամակ գրեց պարոնին, որ մէ մի մարդավարի պատասխան ստացաւ։ Բայց այդ պատասխանն ոչ ինչ չէր խոստանում։ Շիլլէր երկրորդ անգամ էլ գրեց շատ աւելի շտապողական կերպով և իր Մանհէյն գնալու ցանկութիւնն էլ յայտնում էր, խնամ անելով նրան նոյնպէս թէ դուն կարդալուն է մտադիր ընտրել առարկայ մի նոր տրամայի համար։ Թատրոնի բարձրապատիւ տնօրէնը, ինչպէս երեւում է, արժան չհամարեց այս նամակին պատասխան տալ, ուստի Շիլլէր բոլորովին զուրկ մնալով որ և է պաշտպանողէ յոյսը կտրեց մեծ իշխանին իր որոշումն յետ կանգնեցունել, վախենալով որ իրան բանտումը կը դնեն Շուբարտ քերթողի նման, որ Հոհէնասբէրկու բերդումը դրին, թէ որ ինքն էլ յանդգնէր միւս անգամ դրել։ սակայն անկարող լինելով հրաժարուիլ և յետ դառնալ այդ ընթացքէն, որու վրայ իր միակ փառքն էր դրել, որոշեց մի վերջ տալ բոլոր իր ահուն և վախուն ու բարոյական տանջանքներին և գնալ անձնուվին խնդրել Դալբերդի միջնորդութիւնը և պատրաստել միջնորդաբար, իր դարձը դէպի Ստուտկարտ, բայց թէ որ իր խընդիրքն այս մասին ընդունելի չլինէր, այն ժամանակ կարծում էր կարող լինի Մանհէյն մնալ և այն տեղ իր գրականական միտութեանցը հետեւիլ։

Ա.յս խորհուրդը Շիլլէր իր բարեկամներէն մէկին հաղորդեց Սարէյշէր անունն, որ կամենում էր Համբուրկ գնալ ե. բաժշտութիւն սորվելու համար, ինքն էլ միտքը դրաւ նրան հետ մեկնել։ Սարէյշէր աղաս էր, բայց Շիլլէր չէր կարող թողել Ստուտկարտն առանց երբեւ փախստական բռնուելու վտանգումը դնելու իրան. մի հանգամանք նպաստաւոր եղաւ իր փախչելու խորհուրդներին։ Ռուսիոյ մեծ իշխանը վ.ուրդեմբերդ այցելութեան գալու վրայ էր և նրա ընդունելութեան համար փառաւոր հանդէսներ էին պատրաստում. Շիլլէրն էլ այս վայրկեանն ընտրեց փախչելու համար և չէր կամեցել այս դաղտնիքն իր հօրը յայտնել, որպէս զի նրան աւելի համարձակ թողէ իրան տալու պատասխանին, թէ որ մեծ իշխանը նրան հարցուփորձ անելու լինէր. բայց դնաց ու մնաս բարեւ ասաց իր մօրը, որ լաց եղաւ ու չհամարձակեցաւ նրան յետ կանգնեցուցնել իր ճամբորդութենէն. յետոյ դուրս գնալու օրն հասնելով Սարէյշէր յանձն առաւ պատրաստութիւնքը տեսնել, Շիլլէրի դրքերն ու պարկը հաւաքեց, վասն զի այս միջոցին, քերթողը հիացողութեամբ մոլի եղած մի երգի համար, որն որ նոր էր կարդացել, էլ ոչ իր ճամբորդութեան վրայ և ոչ էլ իր խորհուրդների մասին կարող էր մտածել, ու երկար բարակ գնում գալիս էր սենեկումն իր երեւակայութեան մէջ երաղելով։ Իրիկուան ժամը տասին, մի կառք կանգնեցաւ Սարէյշէրի տանը դրանը, երկու բարեկամները նստան այդ կառքումը անցկացան ամենէն մութ փողոցներէն և հասան սրտները դողալով քաղաքի դրանը. – պահնորդն սրանց կանգնեցուց և իմաց տուաւ տեղակալին. ովէ նա – հարցուց սա, Բիտտեր և Վոլֆ բժիշկներն են – Էսլինկէն են գնում։ – թող տուր անց կենան — կառքը շտապեց ու անցաւ դուռը։ Մեր բարեկամներն էլ շունչ առին։

Մի և նոյն վայրկենումը մի ահեղ լոյս է երեւում Լուիզբուրգի կողմէն, այս լոյսը լուսաւորութեանն էր անտառի ճրագալուծին, ուր տեղ մեծ իշխանը ջահերով որս էր անում. մի ծիրանեգոյն լոյս հորիզոնի վրայ տարածեց, ու մի նոր լոյս երկիրը լուսաւորեց, մի մղոն հեռաւորութենէն Շիլլէր տեսաւ հեռուանց ճրագալուսումը Անապատի դղեակը, իմ խեղճ

մայը, ընբնթաց քթի տակով–յետայ գնաց իր ճանապարհը լուռումունջ։

Միւս օրը, երկու ճամբորդները Մանհէյն հասան, Դալբերգ Ստուտկարտ էր գնացել, բայց Մէյեէր Թատրոնի վարիչը սրանց ընդունեց մեծ խնամք ցոյց տալով։ Շիլլէրի առաջին փոյթն եղաւ իր մեծաւորին մի նամակ գրել ամենայն ակնածութեամբ և յարգութեամբ, որու մէջ պարզ ասում էր թէ ի՞նչ էր պատճառն որ ստիպուեցաւ փախչիլ Ստուտկարտէն և ամենայն խոնարհութեամբ հրաման էր խնդրում որ իրան թոյլ տրուի իր դրականական կոչման հետեւիլ, խօսք տալով այն ժամանակ իր երկիրը յետ դառնալ և ամենեւին պատճառ չտալ դանդատուելու իրմէն։ Այս նամակն ուղարկեց իր գնդապետին ու պատասխան ստացաւ մի քանի խօսք որ շատ կոպիտ էին, այսինքն թէ որ Շիլլէր կամենում էր յետ դառնալ Ստուտկարտ, իրան պատիժ չէին տալ իր փախչելուն համար։ Բայց այս բանը չէր, որու յոյս էր ունեցել քերթողը սպասել. տեսաւ ու իմացաւ որ և է պայմանադրութիւն անկարելի է, ուստի Մանհէյն մնաց։

Շիլլէր իր հետն էր տարել Ֆիէսկոյի ձեռագիրը, որու վրայ աշխատել էր մի քանի ժամանակէ հետէ բոլոր գիշերները։ Դերասանները հաւաքուեցան Մէյեէրի տանը դրա ընթերցանութեանն ունկնդիր լինելու։ Առաջին արարուածքին վերջը, ոչ ոք մի խօսք չասաց, երկրորդին՝ ունկնդիրները հօրանջում էին և մի քանիսն էլ սըլսըլուեցան փախան։ Հատուածի վերջին միւսներն էլ հեռացան առանց ամենափոքր դովեստը տալու քերթողին, մնացած անձինքն էլ սկսան խօսք բանալ նոյն օրուայ համբաւների վրայ։ Շիլլէր յուսահատ իր տունն է գնում։ Այն ժամանակ Մէյեէր դէպի մի կողմէ տանում նրա ճամբորդութեան ընկերոջը և ասում նրան. «յիրաւի, Շիլլէրն է գրողը Ա՞ՊՇԻԵՐԸ։ Անտարակոյս, ասումէ նա. ինչու այդ հարցումը, – Չեմ կարող հաւատալ որ այնպիսի մեծ յաջողութիւն ունեցող մի հատուածի հեղինակ կարող լինի այդպիսի մի ողորմելի տրամա չինել ինչպէս որ հիմա կարդացուեցաւ»։

Սակայն երիկունը, Մէյեէր միտքը փոխելով, կամեցաւ ինքը տեսնել այդ նոր խաղը և հէնց կարդաց թէ չէ՝ որ վա-

ղեց գնաց Սարէյշէրին տեսնելու։ «Սխալուեցայ, ասաց նրան, Ֆիէռոն սքանչելի բան է, և շատ աւելի գերազանց քան Ա-ռաջինները, բայց Շիլլէր մեզ անտանելի էր արել այն իր ճոռոմաբանութեամբ և Սուաբիացի շեշտով կարդալովը։

Սրա վրայ խօսք արին, որ այդ խաղը ներկայանայ անմիջապէս որ Դալբերդի դատողութեանն ենթարկուի և հեղինակը նրա մէջ մի քանի ուղղութիւն անէ։ Մինչ այս՝ մինչ այն, Մէյեր տիկինը վրայ է դալի, որ Ստուտկարտի հանդէսը տեսնելու էր գնացել։ Սա պատմեց նրանց թէ Շիլլէրի փախչիլը մեծ շըշըկոց էր հանել և յորդորեց նրան թաղչիլ։ Երկու բարեկամները մտներումը դրին Մանհէյնէն հեռանալ, ուր տեղ շատ հեշտ էր իրանց ձեռք բերելը ու Ֆրանքֆորդ քաշուիլ։ Վերկացան ու ոտով գնացին. վասն զի շատ քիչ փող ունէին։ Ա.յլ և այլ ճամբայներէ պտոյտ դալով հասան քաղաք։ Շիլլէր միշտ իր քերթողական երազները տեսնելով, երբեմն վհատելով, երբեմն կրակուելով մի քերթուածէ և հաւատարիմ Սարէյշէրն էլ միշտ առաջնորդ էր լինում նրան պահպանելով իբրեւ մի հիւանդ երախայ։

Ֆրանքֆորդումը, Շիլլէր մի նամակ գրեց Դալբերդին, որով յայտնում էր նրան սիրտ շարժող խօսքերով իր ցաւալի վիճակը և այն սրտի ցաւն որ իրան հալածում էր ու թշուառութիւնն որ իր գլխի վրայ էր կանգնած, խնդրում է նրա-մէն նաեւ որ իրան մի փոքր փող տայ առ հաշիւ Ֆիէռոյի ներկայացման։ Մի քանի օր սպասելէն յետոյ Շիլլէր նամակատուն է գնում և ոչինչ չդտնում. մի անգամ էլ է գնում և մի ծրար է ստանում իրան ուղղուած, յետ է դառնում տուն բաց է անում այդ նամակի ծրարը դողդղալով և նրա միջում ոչինչ չդտնում. ոչինչ, բայց միայն ունայն քաջալերութիւնք Մէյեերէն և մի սառն նամակ այն անձէն, որուն իբրեւ իր պաշտպանողն էր համարում, որ ուրիշ բան չէր, այլ մի ցանցառ շողքարթ, ժլատ և անձնապաշտ մարդ։

Քերթողի վիճակը Ֆրանքֆորդումը դիմանալու բան չէր, ամենայն խնայողութեամբ հաշուելով, ինչ փող որ մնացել էր իր մօտ ութ օրէն աւելի ապրելու չէր բաւեր։ Բարեբաղդութեամբ Սարէյշէր իր մօրմէն երեսուն ֆիորին ընդունեց Համբուրգ գնալու համար. ուստի սա իր ճամբորդու-

թիւնն անելու տեղ այդ փողով, կամեցաւ մանակից անել իր բարեկամին իր փոքրիկ հարստութեան։ Խնայողութեան համար, երկուսն էլ որոշեցին որ Մանհէյնի մօտ մի գիւղ գնան ընակին, ուր տեղ ապրելն աւելի ժան էր Ֆրանքֆորդէն։ Սէ.յեէր իրանց համար մի փոքրիկ տուն վարձեց Օկէրսհէմումը։ Այս տեղ Շիլլէր ուղղեց Ֆէնէոնը ու սկսաւ Սէրն — Բանորկոնիէն դրել։ Շատ առանձին էր ապրում և քանի գնում էր, գիշերանց աշխատելու սովորութիւնն էր ստանում, որն որ յետոյ խիստ շատ գործածելով այդ սովորութիւնը պատճառ տուաւ իր ուժին տկարանալուն և իր առողջութեան ջնջուելուն։

Նոյեմբեր ամսուն, Դալբերգի առաջն հանեց Ֆէնէոն իր նոր ձեւովը և անհամբերութեամբ սպասեց թէ ինչ որոշում պիտի լինի այդ խաղի համար։ Բայց վատահոգի պարոնը, որ վախենում էր իրան վտանգումը դնել մի բարեկամական նշան ցոյց տալով խեղճ փախստականի օգտին համար, շտապում չէր նրան մի պատասխան տալ։ Կրկին կրկին թախանձանքներէ յետոյ, վերջապէս Շիլլէր խնդրոյն մի լուծումն ստացաւ։ Բայց ափսոս։ Այդ լուծումն բոլոր իր յոյսերը խափանում էր։ Իֆլանդ պարապ տեղ խնդրել էր, որ Ֆէնէոն ընդունուի թատրոնումը։ Դալբերգ ծանուց որ մինչեւ որ մեծ մասով նորէն չշինուի այդ հատուածը չէ կարելի ընդունել։ Շիլլէր մի փոքր յուսով աւելի բաղդաւոր համարեց իրան, վաճառելու այն Շուան գրքածախին թերթին մի ֆրանսիական ոսկով։ Ստացած փողովը տանը վարձը վճարեց և իրան համար այնքան պահեց՝ որքան որ հարկաւոր էր բօէրբախ դընալու, ուր տեղ մի աղնիւ տիկին իր դասընկերներէն մէկին մայրը, Վոլզոկէն, նրան մի ապաստարան մեծարեց։ Ստրէյշէր եկաւ և նրան մինչեւ Վորմս առաջնորդեց։ Այն տեղ երբ մնաս բարով ասելու ժամանակն եկաւ, երկու բարեկամներն ամենեւին արցունք չթափեցին և ոչ էլ մի դանդատ յայտնեցին, այլ լուռումունջ իրար համբուրեցին, յետոյ մեկնեցան և այս համր մնաս բարովը՝ երկու մատաղ սրտերու, որոնք այնքան երկար ժամանակ մի և նոյն ուրախութիւնը և մի և նոյն վշտակրութիւնն էին ունեցել, աւելի բան էր ասում, քան թէ ողբն ու լացը։

Բոէրբախումը, Շիլլէր երաշխաւորեալ և աշխատանքով մի երջանիկ կեանք անց կացուց. մի ուրախ կայարանի մէջ առանձին էր, անտառներով շրջապատուած և դալար հովիտներով զարդարուած գեղեցիկ երկրին մէջ Բուաօլստատի մօտն։ Այս Բուաօլստատ քաղաքը Գերմանիոյ ամենէն շքեղ և փոքրիկ քաղաքներէն մինն է Մէյնինկէնի մօտ, ուր տեղ մի բարեկամ գտաւ Բէնվալտ գրքապետին, որ յետոյ նրա քրոջը հետ ամուսնացաւ։ Յունուար ամսուն վոլզոկէն տիկինը, որ սովորաբար Կաուտկարտ էր բնակում իր որդուոցը դաստիարակութեան վրայ հսկելու, իր մատաղ աղջկանը հետ Բոէրբախ եկաւ մի քանի օր անց կացնելու համար։ Այս մատաղ ու սիրուն աղջկան տեսքը Շիլլէրի սրտին մէջ մի իդէական սիրոյ զգացմունք զարթեցուց։ Բայց շուտով իմացաւ որ վոլզոկէն տիկնոջ աղջիկն արդէն նշանուած էր մի ուրիշ անձի հետ և այս բանը իր սրտին մէջ մի սաստիկ նախանձ յարուց։ Երբեմն կուղէր Բոէրբախէն թողել գնալ էլ նրան չտեսնելու համար. երբեմն էլ կը յուսար, որ իր նշանածի ձեռքէն կը յափշտակէ աղջիկը իր գործերի յաջողելովը։ Ամեն տարի, ասում էր նա, մի ողբերգութիւն աւելի կը շինեմ և առաջին երեսի վրայ կը գրեմ, ողբերգութիւն Շարլոտի համար։ Յետոյ, սիրոյ ցանկութիւնքը և մի քաղցր միաւորութեան խաղաղ կեանք վայելելու երազները դերազանցում էին իր մտքին մէջ քերթողական փառասիրութեան վրայ. ուստի և գրում էր Շարլոտի մօրը։ «Ժամանակ եղաւ որ, անկորուստ փառքի յոյսը ինձ հրապուրում էր, ինչպէս մի պարահանդէսի զգեստ մի մատաղ կնկան կը մոլորեցունէ։ Հիմա էլ բանի տեղ չեմ դնել այդ բանը, ձեզ եմ տալի իմ քերթողական պտակները, որպէս զի առաջին անգամ որ ձեր եղն զարդարէք նրանք գործածէք, նմանապէս իմ ողբերգական Մուսայն էլ եմ զրկում ձեզ, ձեզ աղախին լինելու համար։ Ո՜հ, որքան փոքր է մի բանաստեղծի հանճարոյն ամենամեծ վսեմութիւնը, համեմատելով մի երջանիկ կեանքի հետ։ Իմ հին խորհուրդներն էլ վերջացան, և վայ ինձ, թէ որ պիտի պարտաւորիմ նոյնպէս հրաժարուիլ այն խորհուրդներէ, որ մտքումս եմ դրել։ Յայտնի բան է որ ձեր մօտ պիտի մնամ։ Հիմա խնդիրն այն է որ ի՞նչ կերպով կարող պիտի լինիմ ապահով անել ձեզ մօտ իմ երջանկութեան

սեւոյութիւնը, բայց կամ պէտք է ապահով անեմ կամ թէ չէ՝ մեռնիմ, և երբ կը համեմատեմ իմ սրտի զօրութիւնն ինձ կանգնեցնող արգելքներուն հետ, ես ինքն իրանս ասում եմ թէ կը յաղթեմ նրանց »։

Շարլոտն նորէն իր մօրը հետ Բոէրբախ եկաւ ու Շիլլեր գիտենալով, որ նա իրան չէ կարող լինել, իր կիրքը սանձելու զօրութիւնն ունեցաւ։ Մի քանի օր յետոյ, այս մեծաղ աղջկան տեսնելուց, գրեց նա իր Վոլզոկեն բարեկամին որ այդ աղջիկն իրան յանձնարարութիւն էր արել, այս գեղեցիկ նամակը։ « Այս տեղ առաջին անգամն է, որ կիմանամ թէ, որքան քիչ բան հարկաւոր է երջանիկ լինելու համար։ Մի աղնիւ, և սիրով վառուած սիրտ երջանկութեան առաջին տարերքն է և մի բարեկամ էլ այդ երջանկութեան կատարումն։ Ութ տարի շարունակ միասին ապրեցանք, և այն ժամանակ իրարու համար անտարբեր էինք։ Ահա հիմա բաժնուեցանք իրարմէ, և իրար ենք փնտռում։ Մեր երկուսէն ոմ եղաւ առաջին զգացողը հեռուանց, այն գաղտնի կապերն որոնք մեզ իրար պիտի միացուներն յաւիտեան։ Դու ես, բարեկամ որ առաջին քայլն առիր, և ես կարմրում քո առաջը։ Ես միշտ անյաջող եմ եղել նոր բարեկամներ ճարելու ինձ համար, բայց հիները միշտ պահել եմ։ Դու քո Շարլոտն ինձ յանձնեցիր, որուն ճանաչում եմ, շնորհակալ եմ քո սիրոյն այդ մեծ նշանին համար, և կը նախանձիմ քո վրայ որ այնպէս սիրուն քոյր ունիս։ Նա դեռ մի անմեղ հոգի է, հէնց կարծես արարչի ձեռքէն նոր է դուրս եկել սիրուն, զգայուն և ճոխ։ Աղջականութեան շունչը դեռ ես նրա մրտքի փայլուն հայելին չէ սեւացուցել։ Վայ նրան, որ այդ անարատ հոգւոյն վրայ մի սեւ ամպ կը բերէ։ Վստահ եղիր իմ խնամածութեան վրայ, որով նրան դաս պիտի տամ։ Միայն կը վախենամ այդ պարտաւորութիւնը կատարելու սկսել, վասն զի յարգութեան և բարեկամութեան զգացմունքէն ուրիշ զգացողութեանց անցնելու ճանապարհը շատ մօտ է։ Քո մայրն իր խորհուրդն ինձ յանձնեց, որն որ Շարլոտի բաղդը պիտի որոշէ. նա նմանապէս ծանօթացուց ինձ, քո հայեցուածքն այս մասին։ Կը ճանաչեմ Պ. . . . մի վատը դըժտութիւն վեր կացաւ մեր մէջ, բայց ամենեւին խէթ չունիմ

արտումն և քեզ անկեղծութեամբ կասեմ որ նա՝ քո քրոջը անարժան չէ։ Ցիրաւի կը յարգեմ նրան թէ և չեմ կարող ասել թէ նրա բարեկամն եմ, կը սիրէ նա քո Շարլոտն աղնուաբար, և քո Շարլոտն էլ կը սիրէ նրան առաջին անգամ սիրող կուսի նման, էլ աւելի տեսնու պէտք չունիմ, նա իր աստիճանէն զատ ուրիշ հարստութիւն էլ ունի, և ես կապահովացնեմ քեզ որ, նա յառաջ պիտի գնայ»։

Այդ՝ այնքան սիրուած Շարլոտն, երբէք չիմացաւ թէ, որքան յուզմունք էր յարուցել քերթողի հոգւոյն մէջ, և նրա համար միայն մի անմեղ բարեկամութիւն զգաց։ Յետոյ մի ուրիշ երիտասարդի հետ ամուսնացաւ և ոչ նրան հետ, որ յառաջ իրան համար էր վիճակուած և մէկ տարուց յետոյ էլ վախճանեցաւ։

ԹԱՐԳՄԱՆՈՂ

ՄԱՐԿՈՍ ԱՂԱԲԷԳԵԱՆ

ՋԱՌՈՒԹԵԱՆ (Ռուսաց կայսրութեան) ԿՐՕՆԸ

ՆՈՒԷՐ

ՋԱԼԱԼԱԿԱՆՈՑ [1]

ԹԱՐԳՄԱՆՈՂԻ ԿՈՂՄԷՆ

Բարձր Սրբազան տէր Ֆիլարէտն Մոսկուայու Մետրապոլիտ, սուրբ վանահայր, Երրորդութեան Սուրբ Սարգիս մենաստանին (Լաւրայն [2]), անդամ ամենասուրբ Սինոդին Ռուսիոյ և դիտութեանց Ազատէմիային և պատուաւոր անդամ է Մոսկուայի Համալսարանին։ Այսօր եօթանասունուերեք տարեկան է և Ռուսիան իրան իբրեւ առաջին սրբազան ատենաբան և իբրեւ հայրապետ օրթոտոքս Եկեղեցւոյն կը համարէ։

Մի թարգմանիչ, որուն լուսաւոր եռանդն ու բարի դիտաւորութիւնքը չենք կարող բաւականին գովել, Պ. Սէրպինէ մեր առաջը կը դնէ այսօր կարդալու Ֆրանսերէն լեզուով, երեք հատոր, հաղար հինգ հարիւր երեսէ բաղկացած քարոզներ, ճառեր և ատենաբանութիւնք Տէր Ֆիլարէտի։

Մի առանձին և թանկագին առիթ պատահեցաւ մեր առաջը լաւ իմանալու այն հոգին, որն որ ոգեւորում է օրթոտոքս Եկեղեցին իր ամենաերեւելի և ամենառաքինի անդամներին մէջ։ Չկամեցանք մենք այս առիթը ձեռքէ հանել, և այս ժամուս, որ Եւրոպիոյ վրդոված հարցասիրութիւնը հետամուտ է խորը տեսնել այդ անծանօթ աշխարհին, Ռուսաց կայսրութեան

---

(1) Այսինքն բացի Ջալալեանց Սարգիս եպիսկոպոսէն և ատուածաբան ու կրօնագէտ Զամուրճեանէն և կրօնուսոյց ու Մագիստրոս Մսերեանէն։ Թահիրեանց և Մամիկոնեանց Հայ դիւցազնաց և Նրանցպիսեաց։

(2) Ֆրանսերէն լաւ, Ռուսերէն և արդեան Յունարէն լեզուով Լաւրա, որ կը նշանակէ փողոց, թաղ, Ճեռարան կամ թէ մի շատ խցերի շարք, որոնց մէջ ճգնաւորներն են բնակում։ Առաջին անգամ այսպէս մենաստաններն անապատումը շինուեցան, յետոյ Տերայիտումը։ Մինչեւ այսօր Եգիպտոս, Ասորիք, Յունաստան դրանցմէ կը գտնուին։ Ռուսիոյ չորս երեւելի վանքերը, բացի ուրիշ անհամար վանքերէն, Սուրբ Լաւրա կոչուածը Քիեֆ է որ Բեչերոէ կասեն, Սուրբ Սարգիս, որ Տրոյցոէ կասեն, և սուրբ Աղէքսանդր Նեվսէ։ Այս երկուսը Ս. Բեդերբուրգ են ինչպէս նաեւ Համբարձման վանքը, որ կասուի Պոչայեֆ։

Ծան. Թարգմանչին։

և Արեւելեան եկեղեցւոյն (1)։ կարծենք որ՝ ոչ ոք չմերժել հարց և փորձ անել մեզ հետ այս ճարտարախօս առաջնորդին, որ 1821 թուէն հետէ Մոսկովական սուրբ քաղաքին ձայնն է եղել։

Տէր Ֆիլարէտը Դ ՀՐԵՈՊՈՏՈՍ է • բայց ոչ թէ օրթոտոքս է՝ Արեւելեան եկեղեցւոյն բուն առանձին նշանակութեամբը, այլ աւելի հասկանալի նշանակութեամբ քան թէ այն՝ որ մենք կիմանանք օրթոտոքս ասելով, Եւրոպիոյ Արեւմտքումը, ինչպէս Ստահլ Պրուսիացին Բոնզէնի աղատականութեան հակառակորդը, ինչպէս Բոսուոնի երէցները որոնք Բանիկին հալածեցին, ինչպէս Փարիզու վերանորոգուած Եկեղեցու հոգեւոր ատենի գլխաւոր մասը, որ Կիզոյի պապութեան հպատակեցաւ, Տէր Ֆիլարէտն էլ յարուած ու կպուած է Սուրբ Գրքի ՀՐԷՆ իմաստին, գրական աստուածեղէն ներշնչումն կընդունի, իրան համար, ոչ պատմական զրուցի և ոչ գրուածքի համար տեղ կայ Սուրբ Գրոց մէջ։ Այս էլ կասենք, որ ամեն անգամ որ նա աւետարանական հրաշալի աւանդութեանց մասին կը խօսի, իրան շատ աւելի հեռացած ցոյց կը տայ բուն բանի այլասաց մտքէն, քան մեր տասնուեօթներորդ դարու Գաթօլիք մեծ փիլիսոփայները։

Աստուածաշունչ Գիրքն է միմիայն աղդեցութիւն տուող մեր քարոզատուին, շատ քիչ անգամ կը յիշէ Յունական Եկեղեցւոյ հայրապետներին բայի Սուրբ Ոսկեբերանէն, իսկ Լատինական եկեղեցւոյ հայրապետներին երբէք։

Վարդապետութեան հիմն ու արմատը շատ քիչ կը հեռանայ Հռովմէական եկեղեցւոյն վարդապետութեան հիմներէն ու արմատէն, բացի մի քանի կէտերի մասին, ինչպէս հաղորդութիւնն երկու տեսակով։ Մոսկովական աստուածաբանը այս մասին այնպիսի անսխալական կերպով կը խօսի, որ ոչ մի հակառակախօսութեան չի կամենալ միտք դնել։

---

(1) Եւրոպացիք սովորութիւն ունին Յունական կամ Ռուսական եկեղեցւոյն Արեւելեան անուանել։ Յունականին համար Արեւելեան ասել պատմականօրէն, նկատմամբ Արեւմտեան եկեղեցւոյն կարելի է, բայց Ռուսականին, ոչ ամենեւին, վասն զի ոչքան որ Հայաստան աշխարհը, փոքր Ասիան, Ասորւոց Աշխարհը Եգիպտոսը հիւսիսէն հեռու են, այնքան էլ է Ռուսաց եկեղեցին Արեւելեանին հետ համեմատութեամբ։

Ն. Թարգմանչին։

Մինչեւ դարու ամենախիստ վարդապետութիւնքն իրան խիստ մօտ և ծանօթ են, շատ անդամ այդ վարդապետութեանց վրայ կը խօսի մի տեսակ հաճութիւն ղդալով սրտանց. ոչինչ այնպէս անողորմաբար և խստադառնութեամբ չճարտարախօսեր, ինչպէս իր մեկնութեանց մէջ, յաւիտենական դատապարտութեան և մեղաւորների վրայ։ Որոնք մեռած կը համարէ հոգեւոր կենաց համար և որոնց համար մարդս պէտք չէ որ աղօթք անէ, կասէ, (Հաւ. Բ. Եր. 28)։

Սրբոց պաշտամունքը, այդ քարոզումը, այնքան ընդարձակ տեղ կը բռնէ, որքան որ Սպանիացի քարոզիչների քարոզները տեղ կը բռնէ, բայց և այնպէս սաստիկ կապուած է կրօնի աղդային կողմին, որոյ վրայ պիտի խօսինք։

Վանական կեանքը, որ աներեւանալու վրայ է Արեւմտեան աշխարհներէն, բարձրապատիւ տէր Ֆիլարէտի համար ճշնաւորական հոգւոյ վերայման մի իսկական օրինակ է։ Վանական կարդերը Ռուսիայում կերեւան, որ շատ աւելի մօտ են իրանց վարած կեանքով անապատականներին քան թէ դաթոլիկութեան ղինուորեալ կարդերը, որոնք յառաջ են եկած Հռովմայ ընդդէմ վերանորոգութեան յարուցած կռուի հարկաւորութենէն։

Իսկ Տէր Ֆիլարէտի ոճն, ըստ էր կերպին, ինչպէս սաւումէ այսօր, աւելի մի լաւ բան չենք կարող անել այդ մասին մի դաղափար տալու համար, բայց միայն համեմատել Ռուս ճարտարախօսը մեր Բուրդալուին, մի և նոյն ճշդութիւնը տրամբանական հետեւութեանց մասին, մի եւ նոյն զօրութիւնը իշխանութեան մասին, որն որ նախ ինքն իր վրայ կը դնէ և կը կամենայ, որ ամեն մարդ այդ իշխանութեան ենթարկուի, մինչդեռ այն ոչինչ չուղեր, բայց միայն ընդունուիլ, մի և նոյն արհամարհանքը ճարտարախօսական ղարդարանքների դէմ, մի և նոյն անարդանքն ինչ բան որ հարկաւոր չէ ընծայութեան և որն որ մի միայն ճարտարախօսի փառքին կը ծառայէ։

Բայց ոչ իբրեւ ստուածաբան (որն որ մեր դործը չէ) և ոչ էլ իբրեւ սիրող օտարազդի դրականութեան քննեցինք Տէր Ֆիլարէտի դրաւոր դործերը։ Այլ այն որ հարց և փորձ ենք անում իր դրուածներին, մեղ ծանօթացնելն է այն կապն ո՞ր ով Ռուսիայում կրօնը քաղաքականութեան հետ կը կապէ ու

կը միացնէ և այս մասին Տէր Ֆիլարէտի դիրքը մեզ համար մի յայտնութիւն եղաւ։

Ահ չունինք սուտ դուրս դալու թէ որ ասենք, որ երբէք ոչ մի դաթոլիք հեղինակ մարդկային բանականութեան, փիլիսոփայութեան և դիտութեանց վրայ ինքներան ապահով արած և այնքան անարդանքով խօսած լինի ինչպէս Մոսկուայու Մետրապօլիտը։

Արևմտեան աշխարհի որդիքը, ինչ որ անեն, բանական փիլիսոփայներ են (բասֆնալ)։ Երբ Պասքալ կը դոչէ. «Որքան կը ցանկայի տեսնել այդ դոռոզ բանականութիւնը խոնարհած և աղաչաւոր»։ Մարդ կզդայ, որ նա պաշտում է բանականութեան, որուն նախատում է և որու վրայ խօսում է իբրեւ թէ նա մի տէր լինի որ իրան շնորհ խնդրելու է հասուցել։ Զանց կառնենք Պօսուէան որ Տարբոս էր անէն ճանաչողներնէն կսկսի Աստուծոյ ճանաչողներն հասնելու համար և Ֆենելօնն որ կասէ։ «Ո՞վ բանականութիւն, դու այն Աստուածը չէս որ կը փնտռեմ ես»։ Շատ շուտով կը ճանաչուի երբ մէկը ծանօթ է Յ. ար Մէստրին, մեր ամեն անդրալերնականներուն մեծաւորին, որ մեր ամենէն մոլի դաթոլիքներն բանական փիլիսոփայներն են դաշինք դնող իշխանութեան հետ և թէ աղատականութեան հոդին կենդանի ապրում է նրանց մէջ և դուրս դալի մինչեւ այն մոլեդին աղաղակներուն ոռոնցմով հրատարակում են իրանց հոդեւոր ստրկութիւնը։

Տէր Ֆիլարէտի դործերի մէջ ոչ ինչ չկայ դրանց նման։ Պիտի հարցանեն մեզ թէ՝ այնքան ընդարձակ դրքէ ոչինչ կարող չեղանք յառաջ բերել այս տեղ։ Բայց պարտ կը համարինք մեզ բնագիրը ցոյց տալ, թող կարդան ուրեմն Մոսկուայու համալսարանի և Սուրբ Հոգւոյ Եկեղեցոյն օծման համար ասուած քարոզները։ Ոչինչ պիտի չդտնան նրանց մէջ որ քիչ նմանութիւն ունենայ հաշտեցնելու ջանքին, բանականութիւնը հաւատոյ հետ, որ այնքան բարձրացուց Ֆրանսիոյ Եկեղեցւոյն վառքը տասնուհօթներորդ դարումը և ոչ իսկ մարդուս միտքը կը բերէ Եղուիթներն զիջողութիւնքը մարդկային դիտութեանց համար։ Իշխանութիւն է միայն այն տեղ խօսողը և այդ յայտնուած ճշմարտութիւնը ոչ մի բաժին կամ պայման չընդունիր։

Ի հարկէ այսպէս պէտք է որ մտածէր մի ցեղի որդի, որ ուրիշ առաքինութիւն չճանաչէց, բայց միայն կոյր հնազանդութեան և որ միշտ իշխանութենէն խնդրեց, ոչ միայն իր կեանքի կարգն ու կանոնը, այլ նաեւ իր ամենաներքին մըտածմունքին և ամենակենդանի զգացմունքին։

Նոյնպէս, ինչ արհամարհութեամբ Տէր Ֆիլարէտը խօսում է նոր ժամանակուայ հոգւոյն վրայ «Այս դարուս որդւոց կարծեցեալ իմաստութեան վրայ, փիլիսոփայականութեան վրայ, որ ուրիշ բան չէ, ասում է, բայց միայն կասկածոտութիւն և անվստահութիւն ընդդէմ ճշմարտութեան»։ Մի ամբողջ քարոզ կը նուիրէ հերքելու համար այն մարդկանց մոլորութիւնքը, որոնք կը կարծեն թէ «Աշխարհն ըստ օրինաց կը քայլէ և թէ մարդկութիւնը յառաջ է գնում դէպի կատարելութիւն»։ (Հատ. Բ. էջ. 236.) որքան հեգնութիւն այն անմիտների համար «որոնք» դոյութեամբ կը հաւչակեն այն յաջողութիւնքն որոնց կանուանեն ԼՈՅՍ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԻՒՆ և ոսկի դարը կը խոստանան։

Այն տարերքն որոնք լուսաւոր և քաղաքակիրթ կանուանուին, իրան համար «չորս բերանի ճանապարհներ են, կիրճեր են, խորվիրասներ են, ոլոր մոլոր անցքեր են, անկումն են և մոլորութիւնք»։ Ամեն բան նրա միջումը մեղքով և սոսկումով լիքն են, ուրեմն ոչ մի յոյս կատարելութեան, ոչ մի ճանապարհ փրկութեան, բացի երկնքի ճանապարհէն։ Ոչ մի փրկութիւն բացի դերբնական փրկութենէն։ Ճշմարտութիւնը մարդկային պրոմայէ սկզբումն է և ոչ վերջին և որն որ լոկ անձնական է և ոչ ընկերական. նա ժամանակի որդին չէ, ինչպէս ասում էր Բաղոն Օգոստինոսէն յետոյ այլ իշխանութեան որդին։

Իշխանութիւն։ Այս է ահա առաջին և վերջին խօսքը բոլոր այդ վարդապետութեան. բայց զդոյշ կենանք չընի թէ դեռ հասկանում չլինինք այդ խօսքին բոլոր զօրութիւնը, երբ այդ խօսքը՝ Մոսկուայու մի մետրապօլիտի բերանէն է դուրս գալիս։

Կայսերական տօների համար տուած քարոզները մեղ խորը տեսնել կը տան. բայց մինչեւ ներքին խորունկը այդ վարդապետութեան որուն իրաւամբ ՁԱՌՈՒԹԵԱՆ ԿՐՕՆ անուանեցինք։

Այդ իշխանութիւնն որու վրայ է խնդիրը, օրէնքին իշխա-

նութիւնը չէ, օրէնքը մեռած ջնջուած մի գիր է, մինչդեռ մեղ հարկաւոր եղած իշխանութիւնը մի կենդանի իսկականութիւն է։ Իշխանութիւնն ամբողջ ձառի միջումն կը կայանայ, նոյն իսկ Ձառը (կայսրը) օրէնքն է։ Շատ վաեմ օրէնք քան դրքերում եղած օրէնքը. վասն զի այդ օրէնքը կենդանի է, և կենդանութիւն տուող հոգի կայսրութեան։ (Հ.պ. Դ. էջ. 354)։

«Վախեցիր Աստուծմէ և պատուիր ձառը»։ Դահն ու խորանը սատիկ պինդ կապուած են իրարու։ Փիլիսոփայութեան խելամուտ մարդիկ մի ձառ կուղեն առանց օձուելու ձառերի ձառէն, կռուարար սոփեստեաններ և թշնամի աղանդաւորներ են դրանք Քրիստոսին։ Աղատականութիւնն ինչպէս որ կը հասկանան նրանք մի ցնորք է, և առաջին մարդուղը դրամէն Ադամն եղաւ։ Ուրեմն աղատականութիւնը մի սկզբնական տարավոխիկ ախտ է, որն որ ժառանգեցինք մեր նախահօրմէն, որ առաջին մեղաւորն եղաւ. նմանապէս ամենէն աւելի իրանց անձն տուող մեղաց դերութեան նրանք են որ ամենէն աւելի վառուած են քաղաքական աղատութեան համար։

«Օրհնենք ուրեմն իշխանութիւնը, որ հաստատելով, ցոյց տալով և պաշտպանելով աղատ գործողութեանց համար հարկ եղած սահմանները, դէմ կը դնէ որչափ որ կարող է բնական աղատութեան դեղծման և բարոյական դերութեան տարածուելուն, այսինքն մեղաց կրից և մարութեանց դերութեան»։

Ձառի ինքնակալութիւնն ուրեմն հաստատուած է ձառերի ձառէն, մարդիկը պաշտպանելու իրանց դէմ, որոնց կը յօժարեցնէ մեղք գործել։ Այսպէս՝ հնազանդութիւնը փրկութեան մի գործ կը դառնայ։

Որամէն հետեւում է, որ կայսրութիւնը ձառի ձեռքով կառավարուելով, սուրբ Ռուսիան երկնքի արուարձանն է (Հ.պ. Բ. էջ. 308), ուստի որքան խնամքով բարեպաշտ Ռուսերն պարտական են պահպանել իրանց «օտարական ազգականութենէն»։ Ռուսական իշխանութիւնը, երբ հարեւան տէրութիւնքը դաղանի, անբարոյական և ամբարիշտ ընկերութեանց անձաւներ եղան, բնական պաշտպանողն եղաւ օրինաւոր իշխանութեան, կարգաւորութեան և խաղաղութեան։ 1848 ին

երբ թագաւորները կարող եղան դիմանալ ապստամբութեան և անիշխանութեան մրրկին դէմ, պատճառն այն է, որ զգում էին իրանց քամակը մի հաստատուն թումբ պաշտպանող բացարձակ դերիշխանութեան—Ռուսիան։ (Հաց. Գ. էջ. 286)։

Սուրբ է ձառը, ձառն Աստուծոյ օծուածն է. նա իր օծման ժամանակ մի կենդանի նշխար է, որ Աստուծոյ պատարագ կը լինի կայսրութեան փրկութեան համար։ Նրա դահակալութիւնը մի խորհրդաւոր զոհ է։ Այն բան նրա ձեռին է, հիւանդութիւնը նրա առաջը կը դադարի, նոյն իսկ ժանտախտն կը փախչի նրանէն նրա ծննդեան տարեդարձին օրը, որպէս զի նրան չմթնացունէ տարաժամ տխրութեամբ, (Հաց. Բ. էջ. 197)։ Ձառը կը կապէ ու կարձակէ իր միակ խօսքովը, ամեն հրաման ձառական արդարութենէն կը բղխի, ամեն բարի ձառական ողորմածութենէն կը ծագին։

Աստուած ինքն ասաց «մի դպչիր իմ օծուածներին» նրա համար, որ ձառի իշխանութիւնն Աստուծմէ կը դայ և նրանք կը հայհոյեն, որոնք կասեն թէ իշխանութիւնը ժողովրդէն կը դայ։ Ոչ մի իշխանութիւն ցածրէն չդալ. վասն զի քաղաքական իշխանութիւնն իր սկիզբն ունի, ընտանեաց հօր իշխանութեան միջում. ինչպէս որ հայրն առաջ է իր որդւոցմէն, նոյնպէս էլ ձառն առաջ է կայսրութենէն. կայսրութիւնն նրանով կայ միայն. ժողովուրդն է որ ձառէն կը ծագի և ոչ թէ ձառը ժողովրդէն։

Ձառը, ընտանեաց հօր նման, այն ակն է, որմէ կը բղխի ամբողջ ընկերական կեանքը. սրամէն էլ աւելին է, դէպի երկինք առաջնորդող ճանապարհն է։

Երկրագունան ձառին սեպհականութիւնն է, տարին անդամ ձառական տարի կանուանուի և թէ որ Աստուած երկրիս բերքերին յաջողութիւն աճեցողութիւն կը տայ, իր բարութեան հետեւանքն է ձառի համար, որպէս զի մրգերի առատութիւնը ձառական սեղանը զարդարէ։ Այս աշխարհումն եղած բոլոր զօրութիւնքը և առաքինութիւնք բղխում են ձառական օծման անոյշ խնկէն։

Սուրբ է ձառը, ասում ենք. սուրբ է նաեւ Ռուսիան, թէ որ Բաղաամ փոգովրայ կատարէն հիանալով յափշտակուեցաւ Իսրայելացւոց վրանները տեսնելով, ինչ պիտի ասէր

թէ որ Գրեմլինի օրհնած բարձրութենէն տեսնում լինէր Մոսկուայու սուրբ քաղաքը. երբ Ռուսիան յուզուում տատանուում է, նրա համար է որ ձառն Յիսուս Քրիստոս փորձել է կամենում իր ժողովուրդը. բայց շուտով կը բարձրացընէ և կը պայծառացնէ. վասն զի Ռուսիան ժառանգեց Կոստանդիանոսի տրուած առաքելական պաշտօնը, այն է հոգիները դարձուցանել ՀԱՐԱՓԱՌՈՒՆԷՆ ոչ օրթոտոքսութենէն դէպի օրթոտոքսութիւն ՈՒՂՂԱՓԱՌՈՒՆ։

Սուրբ է պատերազմ հաւատոյ պաշտպանութեան և ծաւալման համար, պատերազմում զարնուելով մեռնող Ռուսերը խոստովանողներ ու մարտիրոսներ են և արքայութեան ժառանգաւորներ, ով որ ձառի համար կը մեռնի յաւիտենական կենաց մէջ վերստին կը ծնի, ձառերի ձառին դոդումը։

Կանգ առնենք էլ այս տեղ, ուր Ռուսական ուղղափառութիւնն առաջին ժամանակուայ . . . . մոլեռանդութեան կը մտնէնայ։ Արդ ահա խեղդուում ենք այդ՝ կրօնական և քաղաքական ձառութեան երկաթեայ շրջանին մէջ. ուրեմն շտապինք դուրս գալ այդ շրջանէն։ Այդ է ուրեմն հաւատը, այդ է ուրեմն հոգեւոր կեանքը եօթանասուն միլիոն հոգւով կազմուած մի մեծ ազգի։ Այդ է ուրեմն ձառութեան գաղտնիքը որ իր մտքումն է դրել կոչուած լինի ծերունի Արեւմուտքը կենդանացնելու։ Սրանք են ահա «սուրբ Ռուսիոյ խոստմունքները և երկրաւոր արքայութիւնը, որն որ մեզ համար պահում է»։

Երբէք այսքան չէինք հասկացել, ինչպէս այս դիրքը կարդալուց յետոյ հասկացանք թէ ո՞ր աստիճան այդ Ռուսիա աշխարհը մերինէն կը տարբերի ու կը փոխուի եղել. չէինք կարող հաւատալ որ մի մեծ քաղաքակրթութիւն իր քաղաքական, ընկերական և կրօնական կերպարանքների տակ աղաւտութեան սպառնալու ՉՆՉՈՒՄը իբրեւ սկզբունք և վարդապետութիւն կարող լինի ունենալ։

Ճանաչենք մեզումեզ. ով բանական և աղատական որդիք Արեւմտեան աշխարհի ՅԱԲԵԼՈՒՆ +ԱՔԱՂԱՆ+ և յաւիտեան հաստատնդենք այդ ստրկականութեան և անշարժականութեան աշխարհին դէմ աղատութիւնն ու շարժողութիւնը։ Այդ աշխարհը մեզ սպառնում է, տանք նրան պատասխան ամեն օր

մի ամբողջ ճանաչողութիւն ստանալով թէ՝ ինչ որ եղել ենք երբեմն, ինչ որ ենք այսօր և ինչ որ էլ պիտի լինինք մի օր։

Թող մեր ամեն մէկին խիղճը Ֆրանսիոյ հայելւոյ նման խիղճը լինի. վասն զի միայն Ֆրանսիան կարող է յաղթանակը դէպի Արեւմտեան լուսաւորութեան կողմը դարձուցել։ Ֆրանսիական հոգին մինակ բաւական զօրաւոր է դէմ կենալու Մոսկովական հոգուն ապականութեան։ Իմ հայրենի աշխարհը (Ֆրանսիան) կարող է միայն ազատել Եւրոպիան։ Կրօնական ձառութեան և քաղաքական ձառութեան հակառակ մեր սուրբ ապստամբութեանց վեհ զգացողութեամբ դէմ դնենք մեր Ֆրանսիական աւանդութիւնքը։ Մտներում բերենք մեր նախնիքներին, Գաղղիացիքը, որոնք իրանց կրօնը կամաւոր և ազատական զօրութեան վրայ հիմնեցին։ Մտներում բերենք մեր յեղափոխութեան պապերին, որոնք քաղաքական կարգին մէջ անց կացուցին ազատականութեան այն վարդապետութիւնը, որն որ Ցէքարդ հիմն դրաւ փիլիսոփայութեան։ Այդ պայմանով կը յաղթենք և այդ ձառութեան հրէշանման քաղաքին աւերակների վրայ, ուր տեղ մարդիկ չկան, այլ միայն մի տէր և ստրուկներ, կը հիմնենք բոլորովին մարդկային իրաւանց քաղաքը ազատականութեան, հաւասարականութեան և եղբայրականութեան նոր Երուսաղէմը։

Օքինիօն Նասիօնալ։

ԱԶԳԱՅԻՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ ՆԵՐՍԷՍ Ե.Ի ՄԱՀԷՆ ՄԻՆՉԵՒ ՄԱՏԹԷՈՍ Ա.ՆՈՑՆ ՄԱՀԸ

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԱՐԴԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
1857 — 1866

(Շարունակութիւն. Տես Թիւ Ը. երես 458)։

Մատթէոսի Թիֆլիզ մտնելու օրերը, երկու ամենամեծ անձինք բացակայ էին այն տեղէն, մինն էր Կովկասու փոխարքայ Բարիատինսկի իշխանն որ Ցաղստան էր դնացել, միւսն էր Ռուսաց Թիֆլիզու Էկսարխն (առաջնորդը) որ մի մօտակայ գիւղումն էր քաշուել քաղքումը չգտնուելու համար այն օրերը։ Այս երկու ամենամեծ անձինքների Թիֆլիզ չգտնուիլը Մատթէոսի ընդունելութեան օրերը պատրաստուածբան է, ասում էին, սա ու նա. այն պատճառով, որ նրանք էլ չհարկադրուէին անձնովին մի տեսակ մեծարանք մատուցանելու Ամենայն Հայոց Կաթողիկոսին, որն որ Ռուսաց և Վրացւոց ժողովրդին աչքին ուրիշ կերպարանքով կարող էր երեւալ և Հայոցն ու իրանց Կաթողիկոսին նշանակութիւնը զգալի կը թուէր նրանց. ինչպէս, որ եղաւ էլ։ Վիրք և Թուրք սկսան իրանց մէջ տրտնջալ ու մրմռալ, ասելով, այս ի՞նչբան է Հայոց արածն, ռուսանում են հա՛, դրա համար է, ուրեմն այդ յարգն ու պատիւը։ Վիրք իրանց ասածին վրայ ապահով էին և դրա համար գոհ և ուրախ, Հայք, ասում էին դրանք, պիտի ռուսանան, նրա համար մեր տէրութիւնն այնքան պատիւ է տալի նրանց, իսկ Թուրքերը կատղում, բրբռում էին և Հայոց երեսին տալի իրանց կրօնափոխութիւնը։ Այս տարաձայնութիւնը համքարի մէջ սկսաւ, համքարէն անցկացաւ կանանց մէջ, մի քանի օրումը բոլոր Թիֆլիզ, ամիսը չլրացաւ բոլոր Ռուսիոյ Հայոց մէջ։ Բայց այդ համբաւը դեռ մեր ականջին չէր դպչել որ զարթնէինք, հե-

տեւաբար դեռ քնած էինք. այդ քնէն մեզ զարթեցնողն ե՞զաւ մի անատորադիր նամակ, որն որ մի փոքր յետոյ պիտի տեսնենք, ուստի դառնանք դէպի մեր առարկայն։

Մ. Լոռու Մելիքեանցն Այվազեան Գաբրիէլ վարդապետին ու Թէոդորեան Սարգիս վարդապետին իր տանն էր ընդունել մինչեւ իրանց Էջմիածին գնալը Կաթողիկոսին հետ. Այվազեանն այդ ընդունելութիւնը սիրով էր ընդունած, բայց Ժողովուրդն այդ զանազանութիւնը Գաբրիէլի համար միւս եպիսկոպոսներէն, որոնք ամենքն էլ Սուրբ Յակոբայ վանքումն էին իջեւանել Կաթողիկոսի մօտ, լաւ աչքով չէր նը՞կատում։ Լոռու Մելիքեանցն, ասում էին, այն դիտաւորութեամբ է դրան ընդունել իր տանն որպէս զի նրանով աւելի լաւ կարող լինի ներգործել Մատթէոսի վրայ. իրօք էլ այդպէս էր լինում։ Այն օրն որ Մատթէոսն իր առաջին այցելութիւնը պիտի անէր Փոխարքայի տանը, Գաբրիէլ վարդապետն մի գրուած թուղթ բերաւ Մատթէոսին, որ բերնուց սորվի և Փոխարքայի տեղակալի յառաջն ելելու ժամանակ ասէ այդ խօսքերն իբրեւ ատենաբանութիւն. Մատթէոսին ճիգրն եկաւ այդ բանը, միթէ երախայ եմ ես, դոչեց նա, բայց Լոռու Մելիքեանց վրայ տուաւ ու ասեց թէ, ո՞չ, Վեհափառ Տէր, կարգն այսպէս է, այդ խօսքերը պէտք է որ ասես և ոչ ուրիշ, յետոյ խայտառակ կը լինինք. այնպէս էլ պնդեցին Այվազեանն ու Ջալալեանն և իրանց արձագանքները։ Ողորմելի Մատթէոսը ստիպուեցաւ բերնուց սորվիլ այդ մի քանի գրուած խօսքերն ու վարժութիւն անել թէ ինչպէս պիտի ատենաբանէ։ Մի և նոյն ժամանակ Մելիքեանցն տնօրէնութիւն արաւ թէ ո՞վ պէտք է լինի Վեհափառ տիրոջ հետ։ Նախ իրան համար որոշեց որ Մատթէոսի կառքումն պիտի նստի և թեւէն պիտի բռնէ դէպի ներս փոխարքայի տանը առաջնորդելու, յետոյ Գաբրիէլ և Սարգիս վարդապետներին համար առանձին կառք։ Մակար, Սարգիս, Սարգիս Ջալալեան եպիսկոպոսներին։ Անդրէաս ու Մեսրովբ վարդապետներին համար էլ առանձին կառքեր, ինչպէս նաեւ մեզ համար։ Սուրբ Յակոբայ վանքի մեծ զանգակն իր ահագին ձայնովն իմաց արաւ բոլոր Թիֆլիզու Կաթողիկոսի վանքէն դուրս գալը։ Ժամը մէկին, ըստ Եւրո-

պացուց, փոխարքայի տանն էինք, ձիաւոր զօրքեր մեզ ճանապարհին դիմաւորեցին և մինչեւ տանը դրանն առաջնորդեցին, սանդուխների վրայ ոսկեթել կերպաս էր փռուած. բոլոր սպասաւորներն իրանց շքազգեստներն էին հագած, ընդունելութեան մեծ սրահումը բոլոր բարձրաստիճան պաշտօնաւորներն իրանց շքազգեստներովը զուգուած, դտահներն ձեռներին ոտքի վրայ կանգնած ընդունեցին կաթողիկոսին։ Լոռու Մելիքեանց կաթողիկոսին կշտին և բոլոր եպիսկոպոսք ու վարդապետք քամակէն դէպի յառաջ գնացին սրահին խորը. ընդհանուր կառավարիչ Կովկասու Օրբէլեանի իշխանը, զինուորականաց ընդհանուր պետ Միլիութին և քաղաքական պաշտօնաւորաց գլուխ Կառուզէնշթէյն կեներալներն ու ուրիշ բարձրաստիճան պաշտօնաւորներ, եպիսկոպոսք և վարդապետք աստիճանաւորների հետ միասին ոտքի վրայ մնացին, Օրբէլեանի իշխանը միայն կաթողիկոսի կշտին նստաւ։ Այս միջոցին մի տուփ բերին, կաթողիկոսը կանգնեցաւ ու բերնուց սորված խօսքերն ասաց, Մ. Լոռու Մելիքեանցն էլ թարգմանեց դրանք ռուսերէն լեզուի այդ կեներալներին։ Յետոյ ինքը Օրբէլեանի իշխանը սկսաւ խօսել ռուսերէն, նոյնպէս դրա խօսքերն էլ Այվազեանը թարգմանեց կաթողիկոսին։ Այդ խօսքերն ուրիշ բան չէին, բայց միայն կաթողիկոսի կողմէն շնորհակալութեան, երախտագիտութեան և անհուն գոհունակութեան զգացմունքներ փոխարէն Ամենօրհնեալ Ռուսաց Աղէքսանդր կայսեր Ամենողորմածութեան և Ամենաբարերարութեան և օրթոտոքս Եկեղեցու պաշտպանողութեան եւայլն եւայլն։ Իսկ Օրբէլեանի իշխանին ասած խօսքերն էին թէ Ամենօրհնեալ վեհափառ Ինքնակալ կայսրն ամենայն Ռուսաց գոհ է որ Մատթէոս ամենայն Հայոց կաթողիկոսութեան բարձր պաշտօնը պիտի վայելէ և թէ ինքն էլ բարեմաղթելով դրան այդ պաշտօնը կը հաստատէ նրան դրա վրայ և կը ճանաչէ նրան ամենայն Հայոց Պատրիարդ կաթողիկոս և ի նշան իր ամենաբարձր գոհունակութեան Աղէքսանդրը Նէվսկու անդամանդեայ աստղանշանը կը շնորհէ նրան և այլ սրանց նման խօսքեր։ Երբ այդ ձեւացած և պատրաստուած խօսքերը պրծան փոխադարձաբար, այն բերուած տուփը բացուեցաւ և մէջէն մի անդամանդեայ աստղ դուրս

հանեց Օրբէլեանի իշխանն որն որ Մատթէոսին վզին կախ անելիս էր, երբ Մատթէոսն աստղը ձեռին առաւ օրհնեց և պաջեց ու ինքը իր վզին կախ արաւ։ Սրահի մէջ մի համբ չՀԲլեոց է իմացուեցաւ, որ Մատթէոսի արածը նկատուեցաւ աստիճանաւորներէն, որոնց մի մասը Հայք էին։ Յետոյ նորէն բաղմեցաւ Մատթէոսն շքանշանները կուրծքի վրայ. Նրա մօտ բաղմեցաւ Օրբէլեան իշխանը շատ մարդավարութեամբ, սուրճ բերին և եպիսկոպոսք ու վարդապետք ոտքի վրայ խմեցին, այդ բանը մի փոքր անվայել թուեց մեզ ինչպէս շատերին, Հայ եպիսկոպոսներն ու վարդապետներն կարող են իրանց Կաթողիկոսին առջեւ նստած սուրճ խմել, երբ այդ սուրճը նուիրուում է իրանց Նրամէն։ Այդ սրբազան պաշտօնաւորաց ոտքի վրայ սուրճ խմեցուելը՝ մեր Արեւելեան կեանքի հակառակ բան է. բայց Ռուսերն այդքան են խորը մտել Արեւելեան ազգերի կեանքի ճանաչողութեան մէջ, ինչպէս նաեւ Եւրոպական կեանքի, իրանց կեանքի մէջ ոչ ինչ չկայ որ իրանց յատուկ սեպհական լինի, ամեն բան օրինակուած, նմանեցուցած և հետեւած է Եւրոպից ԺԶ. ԺԷ. դարերու ընկերականութեանց, ուստի զարմանք չէ, որ շատ բաների մէջ դեռ պակասաւոր կը գտնուին նրանք։ Երբ, այսպէս ասելիք ու տրուելիք պրծան, Կաթողիկոսը մեր կացաւ և մի և նոյն յուզարկաւորութեամբ, այսինքն ձիաւոր զօրքերով շրջապատուած Սուրբ Յակոբայ վանքը դարձաւ։ Իր սենեակը մտաւ թէ չէ՝ ուղղակի դնաց Ներսէս Կաթողիկոսի կենդանադրի դիմացը և երեխու նման վար առնել տալով այն՝ սկսաւ նկատել նրա կուրծքի նշաններն ու ասաց։ «Ներսէսն այս իմ ստացած նշանէն չունի», ես մօտն էի կանգնել. «Ներեցէք վեհափառ Տէր, ասացի նրան, դառն սրտով, դեռ դուք չունիք նրա ստացած նշաններէն»։ Այս իմ խօսքն անմարսելի էր իրան, բայց ըուռ կեցաւ, վասն զի բաղմութեան յառաջ տեղը չէր որ ինձ խայտառակէր, նրա համար որ ինք էլ պիտի խայտառակուէր. ուստի սրտումը պահեց ուրիշ ժամանակ քարը տեղը դնելու։ Սրամէն յետոյ Մ. Լոռու Մէլիքեանցն խօսք քցեց թէ հետեւեալ օրն էլ պէտք էր որ Կաթողիկոսը մի քանի մեծամեծ անձանց էլ այցելութիւն անէ, օրինակի համար, ասաց, Կռիւղէնշթէյնին, Միլիւթինին,

Լ.քսարխին, Կաթողիկոսը տէ՛, լաւ ասաց, թո՛ղ տուէք մի վոքը էլ հանդստանամ ես իմ քեւին, յետոյ կը տեսնենք թէ ի՞նչ կանենք։ Մատթէոսն որոշուած էր երեւում Մէլիքեանցի ձեռնէն իր լրկանն ազատել։ Այս հետեւանքն էր նախընթաց դիշերուայ մի առանձին խօսակցութեան, որ իմ և Մատթէոսի մէջ տեղ անցկացաւ մի ժամու չափ։ Այդ խօսակցութիւնը, Մատթէոսին ամրապնդեց Կաթողիկոսական աթոռին վրայ, փչացուց բոլորովին Կոստանդնուպօլսոյ Պատրիարք Գէորգի և Գերագոյն ու Հոգեւոր ժողովների Սինոդին առաջարկած խնդիրը և Առաջարկութիւնը։ Լոռու Մէլիքեանցի երեսի դիմակը վեր ընկաւ, Գուրկէնբէգեանցն ու Թումանեանցն ճանաչուեցան թէ ի՞նչ յանկի պատգամաւորներ են եղել Օսմանցու Հայոց կողմէն, Ջալալեանցն ու իր արբանեակները որք են Թահիրականք, Կարինեանք և այլ իրանց նման մարդիկ, որ ճանճու նման Ջալալի և Թահիրի չորս կողմն են ման դալի միշտ իրանց ի՞նչ նպատակի ծառայելն և ինչ փոխառովի հոգւով Հայ լինելն երեւան ելաւ։ Բայց Զմիւռնիացի Մարկոս Աղաբէգեանն էլ հէնց այն ժամէն կորցուց իր պաշտօնը Մատթէոսի մօտ։ Լոռու Մէլիքեանցն ու Ջալալեանցն խմանալով բանի էութիւնը որոշեցին իրանց մըտքումը տէրութեան կողմէն մահ տալով Մատթէոսին, հեռացուցնել մեզ իր մօտէն իբրեւ աշխարհական անձն և Ֆրանսիայում դաստիարակուած։ Մատթէոսն էլ այդպիսի պատճառ էր փնտռում և դժուար չէր իրան համար մեր սիրտը վիրաւորել և իրմէն հեռացնել մեզ, վասն զի այնուհետեւ էլ հարկաւոր չէինք իրան, ինչ որ հարկն էր, ինչ ծառայութիւն որ կարող էինք անել իրան կատարեցինք։ Իր շլացած աչքերը բաց արինք, շըշկլուած խելքը սթափեցինք, իբրեւ կաթողիկոս, ի՞նչ նշանակութիւն ունենալը բարոյական աշխարհին մէջ իրան ծանուցինք և որո՞նց ու ինչպիսի մարդկանց հետ գործ ունենալը էլ յայտնեցինք։ Միանգամ որ այդ բաներն հասկացաւ մեզմէ, միանգամ, որ ասում ենք, իր բըռնելու ճանապարհն գտաւ մեր մատնացոյց անելովն, էլ մեզ սպաննեց մեր իր մօտ ունենալու պաշտօնին մէջ։ Բայց մենք յառաջուց լաւ էինք խմանում մեր դլխին դալու ձիւնը, թէ որ այդ ձիւնը չտանէինք կը նշանակէր համախոհ լինել լար-

ուած որոգայթին հեղինակների հետ Մատթէոսին գլորելու նրա մէջ, Մատթէոսին հետ Հայաստանեայց եկեղեցին, եկեղեցւոյն հետ և Հայոց ազգին։ Ահա՛ ինչ ծառայութեան համար հենց երրորդ օրն որ Թիֆլիզ հասանք, հալածուեցանք Մատթէոսէն և Ջալալեանցմէ. սրանք իրողութիւնք են և ոչ ենթադրութիւնք, և իրանց ստուգութիւնը հաստատող ապացոյցներն են հետզհետէ պատահած դէպքերն այլ և այլ առաջարկութեանց չկատարուելը և տէրութենականաց ու կաթողիկոսականաց մէջ վեր կացած պատերազմն, որ Մատթէոսի վերջին ժամանակները տրաքուեցաւ և հրապարակական եղաւ։ Բայց ներեն մեզ մեր ընթերցողները, որ հարկադրուած՝ շատ անգամ մեր վրայ խօսելու պիտի ստիպուինք. անկեղծօրէն կը խոստովանինք, որ մեզ համար, մեր մասին, մեր բերանով խօսելն ամենեւին դիւրալի բան չէ, բայց ի՞նչ անենք, որ իրողութեանց այլ և այլ հանգամանքները կը պահանջեն մեզմէ բանի ստուգութեան համար. ուստի պարտական ենք խօսել։

Զմիւռնիացի Մարկոսեան Մարկոս աղայն, որու հետ ծանօթացանք մեր Թիֆլիզ հասած օրը Մատթէոսի մօտ, նրամէն հրաման խնդրելով մեզ իր տանը հրաւիրեց մի քանի օր անցընելու. մենք էլ մեր քաղաքակցին հրաւէրը բոլոր սրտով ընդունեցանք. նոյն օրն իրիկուան դէմ նմանապէս Էնֆիէճեանց Համբարձում աղայն էլ եկել էր յատուկ Մարկոս աղայի տուն և մեզ իր տանն էր հրաւիրում իբրեւ վաղուցուայ ծանօթ բարեկամ. բայց դրա հրաւէրը կարող չեղանք ընդունել, ուրիշ այլ և այլ ծանօթ բարեկամներէն նմանապէս մեզ իրանց մօտն էին հրաւիրում, սրա համար պարտաւոր էինք գոնէ, ըստ Թիֆլիզու սովորութեան, մէկին կէս օրուայ ճաշու հրաւէրն, միւսին իրիկնաճաշի հրաւէրն ընդունիլ և բոլոր ժամանակն որ Թիֆլիզ պիտի անցնէինք, կարդով մեր ամեն բարեկամներին կամքը գոհ անել։

Մատթէոսի փոխարքային այցելութեան գնացած օրը, երբ իրիկնապահին մի բարեկամի մօտն էինք գնում ճանապարհին, Թամամշեանց քաւրանասուայի առջեւն մի պատանի մեր դիմացն ելաւ և գտակը գլխէն վեր առնելով։ Պ. Ա. ղաբէդեանցը ձեր հրամա՛նքն է, ասաց։ Հրամերէք, ասացի։

նամակը ձեր հրամանոյն է, ասաց ու մեր ձեռին տալով, քաւ-
բանասարայի դռնէն մտաւ ու անհերեւան եղաւ։

Ահա այդ մեղ համար նշանաւոր նամակը մեր ընթեր-
ցողներին աչքի առաջը կը հանենք, որն որ այսքան ժամա-
նակ նամագրի պատուէրին համաձայն ոչ ոքի ցոյց չենք տը-
ուել, և ոչ ոքի էլ դրա մասին մի ամենափոքր բան անգամ
չենք ասել։

«Ձերդ յարգութիւն Պ. Աղաբէգեանց»,

«Երբ իմացանք ձեր յարգութենի, վեհափառ Կաթողի-
կոսի մօտ ծառայութենով մեր կողմերը գալը, բաղդաւոր
համարեցինք մեզ և էս առանց պատճառի չէր։ Առաջինը՝
որ 1853 թուից ձեր յարգութենի անունի հետ միասին ծա-
նօթ էր մեզ և ձեր դաստիարակութենի ուղղութիւնը դէպի
Հայոց եկեղեցին և ազգը երբ հանդուցեալ Ներսէս Կաթո-
ղիկոսի մօտ էիք եկել, ուր տեղ և մենք պատիւ ունեցանք
ձեր անձի հետ ծանօթ լինելու։ Էս էն ժամանակն է որ ձեր
յարգութիւնը մի ուսումնարան է եղել կառուցել Զմիւռ-
նիայում և նորա հաստատութեան համար Ներսէս Կաթողի-
կոսի օգնութիւնը ու պաշտպանութիւնը խնդրելու համար
է եղել եկած Թիֆլիզ։ Բայց յետոյ Արեւելեան պատերազմ
բաց լինելով ամենեւին ձեր յարգութենի մասին տեղեկու-
թիւն չըստացանք, երբ պատերազմ դադարուեց և սկսան
Օսմանցու երկրից օրագրերը մտնել մեր տէրութենի սահմա-
նից, Արշալուս լրագրումը կարդացինք թէ՝ ձեր յարգու-
թիւնը տեսուչ է նշանակուել Զմիւռնիայի Մեսրոպեանց և
Հռիփսիմեանց վարժարանների վերայ, էն ժամանակներն էր
նմանապէս մի տպված տետրակ էլ ընկաւ ձեռներումս. էդ
տետրակի մակագիրն էր Յայտարարութիւն կանոնների Ս.
Մեսրոպեանց վարժարանի. էնքան հաւանելի թուեց ձեր
յարգութենի յօրինած ազգային հրապարակական դաստիա-
րակութեան ուղղութիւնը, որը որ Ներսիսեան ուսումնարա-
նի տեսչութեանը առաջարկեցինք ձեր ուղղութեան հետեւե-
լու և շատ բաների կողմից համաձայն է թեւ անկատար կեր-
պիւ։ Էդ տետրակը ձեր յարգութեան յիշեցնելու պատճա-
ռն է, որ նորանում ձեր դրչից դուրս է եկած մի քանի

զդացմունքներ, որք կարծում են լինին որպէս ՏԷՊՆ ձեր հայեցուածքի ազգային դաստիարակութեան վերայ, սոքա են ահա՛ ձեր տետրակի 8–9 երեսներումն եղած խօսքերը։

«. . . Ի՞նչ բարիքներ չբերին մեր նախնիք հայրենասիրութեան հոգւով, որչափ երեւելի և մեծամեծ գործեր չգործեցին Մեծն Տրդատ և Ս. Գրիգոր քրիստոնէութեան կրօնին սիրով . . . աւելի զարմանալին, միթէ՞ մեր գրականութիւնը իսկ Ս. Աւետարանի սիրուն պարտաւոր չենք։ Երկնային անմահական սէր, որ մեր նախնիքը մոլեռանդութեան անհընարին հարուածներէ պահպանեց. շատ և շատ անգամ օրինաւոր եղբայրսիրութեամբ միացուց ազգը Սասանեաց, Արաբացւոց, Թաթարաց մոլեկան աղանդոց դէմ. . . մեր նախնեաց քրիստոնէական կրօնի սիրուն համար՝ թափած արեանց պարտաւոր ենք մեր այսօրուայ էութիւնը և կը վայելենք անոնց մեղ աւանդած կրօնը, լեզուն, յիշատակները» . . .։

«Արդ՝ Չանանք արթնցնել սրտերնուս մէջ այս երկնային ազդումը, թող մեղ օրինակ ըլլան մեր նախնեաց գրոց մէջ յիշատակուած երեւելի իրերը, թող մեր սրտերուն մէջ սրբաղան ուխտ մը լուիկ մնջիկ բողբոջի, անձնատուր ըլլանք հոգւով, մտքով և մարմնով դաստիարակութեան մեղ բացած դրկաց. ան մինակ կրնայ երջանիկ ընել մեղ, ան մինակ մեր դիտաւորութիւնները, մեր միտութիւնները կրնայ ուղղել և որպէս զի ամեն բանէ յառաջ հայրենասէր ըլլանք սիրով, կրկնք և հարկաւ, ծծել տանք մեր որդւոց իրենց մօրը կաթին հետ ազգին և կրօնին սէրը. խելահաս եղած ատենին՝ չունենան ուրիշ բան իրենց դաստիարակութեան սկզբունք, հապա միայն կրօնն ու լեզուն, այս սէրն ու սկզբունքը իրենց էութիւնն ընեն, միայն անոնց համար ապրին, թէ որ ազգ մը չունենան սիրելու, իրենք ալ չըլլան. քսան տարեկան Հայ մը ուրիշ մարդ մը չըլլայ, հապա բուն իսկ հայն կարդալ սորվելով՝ միայն իր ազգին իրերը սորվի։ Տասը տարեկան՝ իր ազգի վիճակը ճանչնայ . . . տասնուհինգ տարեկան իր ազգին ամբողջ պատմութիւնը» . . . եւայլն։ Ցետոյ կը վերջացնէք ձեր դրութիւնը էս խօսքերով։ «Ահաւասիկ, Տեարք իմ յառաջիկայ ճառագրած սկզբանց վրայ հիմնելով, Զմիւռնիոյ Հայոց Ս. Մեսրոպեան վարժարանի կանոնն-

ՐԸ ի դեր կարձանագրեմ ի բարգաւաճումն Հայկազեան տոհ-
մի և Հայաստանեայց Ս. եկեղեցւոյ, որու (այսինքն Հայոց
ազգի) հոգին եղած է թէ անցած դացած դարերուն մէջ և
թէ ներկային և ապառնիին ալ պիտի ըլլայ»։

«Արդ խժում, ահա դտանվում է ձեր յարգութիւնը մի
էնպիսի պարագայումն որ շատերի աչքերը դէպի ձեր յար-
գութիւնը դարձրած սպասում են տեսանել ձեր գործ.քը հա-
մաձայն ձեր էդ դրքումն ասածներին. բայց պարբաղդա-
բար ձեր առաջին քայլիցը երեւումէ, որ Այվազովսկու նը-
ման յարգ և պատիւ դտանելու համար լինիք եկած մեր
քաղաքը, ձեր յարգութիւնը, որպէս հաւատարիմ ծառա-
յող վեհափառ կաթողիկոսի, փոխանակ նորա կշտից բնաւ
չհեռանալու դնաց Մարկոս աղի տանը ղօնախ եղաւ, ան-
պատճառ առանց գիտենալոյ թէ էս քաղաքումը ի՞նչ պաշ-
տօն է վարում նա, ի՞նչ բանով իր ժամանակն անցն է կաց-
նում. թէ որ ձեր յարգութիւնը սիրողէ խաղի և մթնումը
մտիկ տալու հալխի արածների, էդ ձեր գիտենալու բան է,
թէ որ դուք թուղթ չէք խաղում, ինչ հարկաւոր է ձեր յար-
գութենի Մարկոս աղի տանը դնալը, ինչպէս անվայել և ան-
հարկաւոր էր Այվազովսկու Լօրիս Մելիքօֆի տանը ղօնախ
անելը, էնպէս էլ ձեզ համար Պ. Աղաբէգեանց։ Էնդուր հա-
մար, որ մեր Եկեղեցու վասակները շուրջն էր արել վեհա-
փառ Կաթողիկոսի և նորան ամեն րոպէ սխալացնում են։ Ե-
րեւումէ ձեր յարգութիւնը տեղեակ չէ Լօրիս Մելիքօֆի
ինչ պաշտօն վարելը վեհափառի մօտ, ի՞նչ դրութիւն ստո-
բագրել տուած լինելը ձեր Կ. Պոլսոյ Գէորգ Պատրիարքին և
առաջարկելը վեհափառին Ռուսաց Էկզարխի մօտ այցելու-
թիւն դնալու և դորանով հպատակութիւն ցոյց տալու ու էն-
պէս թիֆլիզու անտէր ժողովրդին հաւատացնել տալու՝ թէ
Հայոց Կաթողիկոսը Ռաների հետ հաւատով միացած է և
էսպէս Ռսի հաւատը ընդունել տալու մեզ կամաց կամաց, ո-
րոյ համար Ներսէս Կաթողիկոսը էնքան տարի դէմ դրաւ
Մինիստրի հետ կռուելով»։

«Մեզ թըվում է, որ էս բաներումը տեղեկութիւն չունի
ձեր յարգութիւնը. էնդուր համար մեզ պարտաւորութիւն
համարեցինք ձեզ լուսաւորել էս մասումը ինչ ինչ հանդա-

մանքների վերայ, որք մեծ յարաբերութիւն ունին ձեր պաշտօնի հետ և որք շատ հարկաւոր են գիտենալ ձեզ համար »։

« Ռուսի տէրութիւնը կը կամենայ, որ Հայոց Եկեղեցին իր Եկեղեցու հետ միացն է, դորա էդ միտքը Ներսիսի ժամանակից յայտնուած է, բայց չուզել, որ յայտնի ներդործի, հապա մեր կամքովն ու ձեռքովը կուզի որ դլուխ դայ բանը, էնդուր համար Հայերի հետ շատ նուրբ քաղաքականութեամբ կը վարուի։ Ջալալեանց Սարգիս եպիսկոպոսի արածները 'ի հարկէ լսած է ձեր յարգութիւնը. նա գիտէ միայն թէ ինչ պատճառաւ էնպէս շուտով վախճանեցաւ Ներսէսն, նա գիտէ միայն թէ, ովքեր էին Ներսիսի ծոցիցը նորա թղթերը յափշտակողները։ Էնդուր համար, որ նա շատ մտերիմն է մեր երկրի փոխարքայ Բարիատինսկու իշխանին և ոչինչ չը լինել որ Սարգիս եպիսկոպոսը առանց նորա հրամանի դործ է։ Նա Ներսիսեան ուսումնարանը կործանեց, ուսանողներին բօլիցու սալթաղների թագել առաւ, լաւ ուսուցիչներին դուրս հանեց և նոցա տեղ ազգի չարակամ և խաւարեալ մարդկերանցը նշանակեց։ Հիմիկ էլ դորա միտքը խաբել է Վեհափառ Կաթողիկոսին որ միշտ իրա կամքին այսինքն Ռուսի կամքի համաձայն վարուել տայ նորան։ Ամա, մենք լսած ունինք, որ Վեհափառ Կաթողիկոսը շատ զայմէ մեր հաւատու վերայ և էնդուր համար կռուած է եղել Ինկլիզի դեսպանի հետ Պօլսումը և Գաթօլիքների քարոզիչների դէմ մեր հաւատու համար։ Նա ականջ չի կախել Սարգիս եպիսկոպոսի և Լօրիս Մելիքոֆի ասածների։ Բայց Ա.յվազովսքին կուսկալացնէ Վեհափառին, նորա համար լսած ունինք թէ նա Վեհափառին ասած է եղել որ Ռուսի տէրութենէն Օսմանցու երկրին համար քօնսուլներ խնդրի Հայերին պաշտպանելու համար։ Վեհափառ Ցէրն էլ խնդրել է եղել։ Էսպիսի բաների համար է, որ Ռուսի տէրութիւնը կուզէ մեր Ս. Եկեղեցին իր Եկեղեցուն հետ միացընել, որով աւելի հեշտ լինի իրան համար իր ազդեցութիւնը ներդործել Օսմանլու տէրութեան վերայ։ Սորա համար է նա և, որ Ա.յվազովսկուն էլ փարիզից հրաւիրեց Ռուսի երկրումը վարժարան հիմնել, ուր Օսմանցու Հայերի որդուցը Ռուսի ուսում տալով յուղարկի նոցա իրանց երկրումը Ռուսի օգուտի համար աշխատելու։ Էս

մասին, էս նամակով մի գրութիւն էլ եմ յուղարկում ձեր յարգութեան, եղ գրութենիցը լաւ միտք կառնէք ամէն բանի հետ ծանօթ լինելով մեր տէրութեան »։

Հիմիկ մեր խնդիրքը ձեր յարգութենից էն է, որ ձեր ամէն ջանքն անէք և հոգս քաշէք և չը թողէք, որ Վեհափառ Կաթողիկոսը Ռսի էկղարխին այցելութեան գնայ. հինգշաբթի օրը նշանակված է, որ Վեհափառը էկղարխին գնայ և էսդուր համար Աբել Գուրկէնբէգեանցն, Թումանեանցը, Լօրիս Մելիքօֆն, Սարգիս եպիսկոպոսը, Թահիրեանցն պատուիրված են նորան համոզելու։ Եթէ Վեհափառը, Աստուած մի՛ արասցէ՝ սխալուի և նոցա կամքի համաձայն չարժի, էն վախտ մենք կուգիտենանք, որ նա ամենեւին ղայմ և հաստատուն չէ մեր հաւատի վերայ և նորա կամքն է, որ Հայերն իրանց հաւատը փոխեն Ռսի հաւատի հետ և մենք էլ նորան Հայոց Կաթողիկոս չենք ճանաչել և Օսմանցու Հայերին բանի էութիւնը կուիմացընենք, որ իրանց ընտրած մարդին յետ կանչեն »։

«Էս հանդամանքներից հասկանում է անպատճառ ձեր յարգութիւնը թէ մեր Վեհափառ Կաթողիկոսը ինչ վիճակումն է գտանվում. ուրեմն ձեզ վրայ է պարտաւորութիւն ընդդէմ ներգործել էն մարդկերանց, որք կամենում են սխալացնել Վեհափառին և մեր Եկեղեցին Ռսի տէրութենի ճանկումը յանձնել. դուք գոլով Օսմանցու մարդ, ինչպէս Վեհափառ տէրը, կարէք նորան բան հասկցնել ձեր կերպովը։ Ձեր յարգութիւնը էն տեսակի լաւ խօսքերի զգացողն է և էնպիսի Հայու հոգիէ կրում իրա միջումը, որ նորա կենական կեանքը ճանաչում է, ապա ցոյց թող տայ իր գործ քովն էլ իր ստացած ուսումի ուղղութիւնը, եթէ ոչ կը համարեն ձեր յարգութիւնը, մի նոր Մարկոս աղա, որ եկել է մեր երկրումը իր աղգի ճնասովը օգուտ շահվիլ մեր տէրութենից, նշան ստանալ, ոսկի գատել և ոչ իւր աղգի ծառայութիւն անել ինչպէս ցոյց է տալի լրագրերումը իրան։ Ձեր յարգութիւնը լաւ իմանայ, որ մեր Ռսի տէրութիւնը ձեր Օսմանցու տէրութեան չը նմանիլ, սա կը կամենայ, որ ամէն ազգ և ժողովուրդ իւր օգտի համար ծառայեցնէ, էն պատիւը որ տալիս է Վեհափառին, մի կարծիլ որ մեզ համար է, դրանով

կուզէ նա մեզ խաբել և էնպէս դէպի իւր կողմը որսալ։ Եր-բէ.ք չիհաւատայ Վեհափառ տէրը նոցա . . . խօսքերին, նոցա տուած նշաններին և պատիւներին, նո.քա թոյն են մեզ համար և մեր դլխի տակին բարձ խորը քնեցնելու, ի հարկէ ձեր յարգութիւնը էստեղ պէտ.ք է մնայ, էն վախտ ամեն բան աչքով կուտեսնէ և կուիմանայ։ Ա.հ մի ունենալ բնաւ, դու.ք Օսմանցու հպատակ մարդ է.ք, ձեզ ոչ ո.ք բան չիկարայ ա-նել, մեր դեներալները, իշխանները, եպիսկոպոսները ձեզ ոչինչ չեն կարենալ ասել, ներդործ եցէ.ք նոցա ընդդէմ համար-ձակաբար. ի հարկէ Վեհափառ տէրն էլ ձեզ կուսիրէ ու կու-բռնէ, իսկ թէ որ էս քաջութիւնը չէ.ք ունենալ, կուվա-խենա.ք և ձեր անձնական օգուտը ազգի օգտիցը լաւ կուսի-րէ.ք, լաւ կը լինի որ Ռուսաստանից դնա.ք և ձեր տունը չի կեղտոտէ.ք ամեն լաւ հայերի առջեւ սեւերես դուրս գալով, բայց յոյս ունինք ձեր յարգութենի վերայ, ինչպէս ձեզ ճա-նաչողներն ասում են, թէ դու.ք շատ վառուած հոգի ունէ.ք ազգի համար և նորա օգուտը աւելի կուզէ.ք քան ձեր ան-ձինը »։

« Ներեցէ՛.ք, ձեր յարգութենից յատուկ խնդրել, որ էս դրութիւնը մեր երկրումը ոչ ո.քի չցոյց տալ և ոչ ո.քի էլ բան չասել էսդուր մասին, թէ կուսխալուի.ք ու սեւադլուխ-ներին շանց կուտա.ք էդ դրութիւնը, շատ անմեղ մարդկե-րանց գլաս կու հասցնէ.ք, էնդուր համար լաւ կանէ.ք որ կար-դալուց և լաւ իմանալուց ամեն հանդամանք փչացնէ.ք էս, որոյ համար մեր շնորհակալութիւնը ձեր յարգութեան խո-նարհաբար մատուցանելով մնամ.ք ձեր յարգութիւնը յարգե-լով և պատուելով »։

Թիֆլիզ 1859. Յունիս 21.

Իսկոյն բացի արի ծրարը, երկու թերթ դուրս եկան մէ-ջէն, մինը ծայրէ ի ծար գրուած, միւսն միայն երկու երեսը որու վերնագիրն ինձ վրայ էր ուղղուած, բայց առանց ստո-րագրութեան։ Ա.յս պէտ.ք է մի խնդրագիր լինի, ասացի ես ինձ ու ինձ, կաթողիկոսին, որու տէրն իմ ձեռ.քովն է կա-մենում մատուցանել նրան։ Բայց սխալւում էի, մի փոքր կարդացի դնալիս, ոչինչ չէի հասկանում, ինչպէս խնդիրը

նոյնպէս և ոճն ինձ անծանօթ էր, ուստի ծոցումս դրի յետոյ մտադրութեամբ կը կարդամ, ասելով։ Ինձ հրաւիրողի տունն որ հասայ, այն տեղ մի քանի հոգի տեսայ, որոնց մինն ատենաւորի հագուստով էր, միւսը հասարակ քաղաքացւոյ, այս անձինքների հետ ծանօթացուց ինձ հրաւիրողն։ Մի փոքր ժամանակ անցկացաւ մի քանի երիտասարդներ էլ եկան, սրանց հետ էլ ծանօթացանք, մի փոքր յետոյ մի թիւտմօրուս քահանայ եկաւ երկար մի գաւազան ձեռին, նրա քամակէն մի քանի անձինք էլ, սրանց հետ էլ ծանօթ եղանք։ Այստեղ սրանց անունները կը յիշէինք, թէ որ հարկաւոր լինէին, բայց որովհետեւ մատնացոյց արած կը լինինք իրանց կառավարութեան այդ անձինքն անմեղ տեղ, ուստի և այս պատճառով զանց կառնենք այդ յիշատակութիւնը։ Իմ միտքը ծոցումս եղած թղթերի հետ էր, ինձ մի տեսակ ահ էին տալի այդ թղթերը, նրա համար անհանդիստ էի, նշմարեցին իմ այդ անհանգստութիւնը դէմքիս վրայ մեր անծանօթ բարեկամները. ներեցէք ասացի նրանց, ինձ մի փոքր ժամանակ տուէք, այս ժամուս այս տեղն եմ։ Մի առանձին սենեակ քաշուեցայ ու սկսայ մտադրութեամբ կարդալ իմ անուանն ուղղուած նամակը, միւսն էլ վեր ի վերոյ աչքէ անցկացուցի. էլի ինչպէս որ հարկն է այնպէս հասկանում չէի այդ գրուածքների զօրութիւնը, միայն իմ անձի դէմ եղած նկատողութիւնքն ինձ նեղացնում էին։ Մարկոս աղի տանը դնալը մի մեղք է եղել, ասում էի ինքն իրանս, ի՞նչ պատճառով չէի իմանում։ Կաթողիկոսի մօտն եղողները վասակներ են, որ նրան կուզեն սխալեցնել, ի՞նչ բանի համար, հաւատոյ փոփոխութեան, այս ի՞նչ բաներ եմ լսում։ Ռուսաց կառավարութիւնը բարեկամ չէ՞ Հայոց աղգին, հապա՛ ինչու՞ բոլոր հայք նրա պաշտպանութիւնը կը խնդրեն ընդդէմ ուրիշ կառավարութեանց, անմեկնելի՞ հանգուց։ Մէկ կողմէն ուրախ են իմ Մատթէոսի հետ դալը Ռուսաստան, միւս կողմէն ճանապարհ են ցոյց տալի դէպի իմ երկիրը յետ դառնալ թէ որ Ռուսաց կառավարութենէն պատիւ ու նշան ստանալու համար եմ եկել։ Այվազեան Գաբրիէլ վարդապետին նոյնպէս մի և նոյն ընդունելութիւն, մինչդեռ մենք մեր երկրումը նրան ուսանող ենք անում և Հայոց աղգի նոր սե-

ըընդ-ին Լուսաւորիչ ենք համարում, մի խօսքով այսպէս ես ինձ ու ինձ մոտածում ու խօսում էի, երբ եկաւ ինձ հրաւիրողը, հրամեցէ՛ք, ասաց, չայ խմելու, վեր կացայ գնացի սենեակ, տեսայ մի քանի անձինք էլ եկած էին, դրանց հետ էլ ծանօթացուց ինձ տանտէրը, ամենքը մէկանց տանէն աւելի էին, ամենքն էլ լաւ Հայերէն խօսող, ոմանք Ռուսերէն էին խօսում, քահանայն մի կամ երկու անդամ վրացերէն բնբնթաց։ Ներեն մեղ մեր ընթերցողներն, որ այս առաջին անդամ տեսած Թիֆլիզու Հայոց ընկերականութեան՝ իմ վերայ արած տպաւորութիւնն իմ ուղածին պէս նկարագրեմ, ուշիմ ընթերցողները կարող են ըմբռնել իմ այս գրուածքէն թէ Թիֆլիզու Հայոց ոգին և զգացմունքն որքա՞ն ճընշուած է և ի՞նչ ծածկովի հայեցուածքով և անորոշ խօսուածքով են շարժ դալի իրանց ամենամօտ և ամենակարեւոր խնդրի մասին, որ է Հայոց Եկեղեցուն և ազգին։ Այս անձինքներէ մինը մի քանի հարցուփորձ անելուց յետոյ Կաթողիկոսի մասին և Պօլսեցւոց վրայ, խօսքն ինձ ուղղելով ասաց – Ո՞նց պրծար Մարկոսի աղի փորեմէն (1) դուրս դալու, ես հէնց կարծում էի, դա քեզ իր որդեդիրն է արել – լաւ չհասկացայ այս խօսքը, բայց Մարկոս աղի անունը որ լսեցի գէմքիս դոյնը փոխուեցաւ։ Միւսը վրայ տուաւ ասեց – Մարկոս աղի դտակումն էր, բայց ես նրա միջից պրծացրի մեր Մարկոս աղէն – այս խօսքի վրայ ամենքն էլ ծիծաղեցան։ Բայց ես ճգռւում էի ներսումանց առանց ցոյց տալու դրսումանց։ Մի ուրիշն էլ, որ խոհեմ և գիտուն մէկն էր երեւում չայի դաւաթը բերանը տանելիս, ասաց ինձ – Մարկոս աղա, Մարկոս աղէն քեզ դեներալ Լէյլիւն ներկայացուց – ոչ ասացի զարմանքով, բայց ասաց թէ ինձ կը ծանօթացնէ նրա հետ։ — Ապահով կաց որ նա իր խօսքը կը կատարէ, պատասխանեց նա, քահանայն էլ վեր կացաւ ու ասաց – ինչո՞ւ էք նեղացնում մեր ղօնախին (հիւրին) նա հոռհոռ (Մարկոս աղէն) սա հոռհոռ (ինձ համար կուզէր ասել) ի հարկէ իրար հետ բարեկամ պէտք է լինին – այս հոռհոռը չհասկացայ, ներեցէք ցեր հայր ասացի, հոռ հոռ ի՞նչ է – սէրտէրի հետ քիչ համարձակութեամբ էի խօսում և սրտի

(1) Մարկոսեան Մարկոս աղայն մեծ փորանի է, յեգնելով, ասել ուզում են երբ թէ նա իր փորի մէջ դրած լինի ինձ։

նեղութիւնս ցոյց տալի. հա՜ հա՜, ասաց, տէրտէրը, դուք Պոլսեցիքդ հոս հոս չէք ասել. լաւ, ուրեմն հա՜ հա՜ներ էք, հէնց այսօր Վեհափառն էլ և իր վարդապետներն էլ հա՜հա՜ էին ասում – այսինքն Պոլսեցիք այ՜ պեղ, այ՜ պեղ ասելու տեղ հա՜ հա՜ կասեն եղել, դրա համար Թիֆլիզեցիք էլ նրանց հա՜հա՜ անունն են տուել։ Ես բարկութենէս բանի էութիւնը չէի հասկանում, նրանք էլ իմ ոչինչ բան հասկանալս իմացան ու սկսան իրանց մէջ ոմանք Ռուսերէն խօսել, ոմանք Վրացերէն, մէկը ծանրութեամբ հարցուց ինձ թէ – ինչո՞ւ Վեհափառին մօտը չեմ մնում միշտ – միշտ նրա մօտն եմ ասացի, միայն հիմա բաժանուեցայ նրամէն հրաման խնդրելով – վատ արիր, ասացին – Գուրկէնբէկեանցն այն տեղ էր երբ ձեր հրամանքը դուրս եկաւ վանքէն – հրամերէք ասացի ու զարմացայ թէ ո՞ր տեղէ դիտեն սրանք Կաթողիկոսի մօտ ոմ լինելը – Լորիս Մելիքեանցն դալիս է ասաց մի ուրիշը, Կաթողիկոսի մօտ – ի հարկէ պատասխանեցի – Էկզարխին երբ պիտի գնայ Վեհափառ տէրը – չեմ դիտել, բայց Մելիքեանցն ասաց նրան թէ պէտք է գնալ, Կաթողիկոսն օր չորոշեց – այն կծու խօսողը նորէն խօսքն ինձ ուղղելով ասաց, ծիծաղով – Մարկոս աղա՛, Լորիս Մելիքոֆի քեզ համար նշան խոստացաւ ստանալ տէրութենից – ոչ ամենեւին ասացի – վաղը միւս օրը կը խոստանայ ասաց և յիրաւի այնպէս էլ եղաւ։ Այս խօսքերի ժամանակ մի կողմէն չայ էինք խմում, միւս կողմէն ծխեցնում էինք, ես կէս օրուայ ճաշն չէի մարսել, վասն զի կէս օրն երկու ժամ անցնելուց յետոյ էի ճաշել, երկու երեք գաւաթ չայն էլ որ իրարու վրայ խմեցի արդէն որ հոգւով տաքացած էի, մարմնով էլ ուռեցայ, և քիչ մնաց՞ որ սրտի նեղութենէս տրաքուիմ. յառաջ՝ ստացած նամակս էլ ինձ տխրեցուցել էր, հիմա այս մարդիկն ինձ նեղացնում էին. ինչպէս անեմ ասացի ինքնիրանս, վո՞ր կենամ գնամ, այս մոռածեցի ու դտակս ձեռիս առի որ մեկնիմ։ Ամենքը մէկանց ոտք ելան ոչ ասացին – իրիկնահացն այստեղ պէտք է անոյշ անես, ո՞ւր ես դընում, – պէտք է որ Կաթողիկոսի մօտը գնամ, ասացի, հարկաւոր գործ ունիմ – ի՞նչ է այդ հարկաւոր գործը մենք չե՞նք կարող իմանալ ասացին – բան չկար որ ասէի նրանց, ստացած նամակիս համար նրանց հետ չէի կարող խօսել – բայց հաս-

կանում եմ ձեզ ասացի նրանց, թէ և դուք պարզ խօսել կամ չէք կամենում կամ ինձ ծաղրել էք կամենում, որ իզ միրէն այս տեղ եմ եկել առանց մոռածելու որ ձեզ նման ուսումնական անձինք կան այս տեղ և իմ անելու բաներէն շատ լաւ բաներ կարող են անել Կաթողիկոսի մօտ, ճշմարիտն ասելով իրաւունք ունիք, ոչինչ, ասացի, ես եկել եմ Հայաստան տեսնելու համար, հերիք է որ Արարատը տեսնեմ, էջմիածին տեսնեմ մի քանի նշանաւոր տեղերն ճանաչեմ իմ նախնիքների, յետոյ վերը կը կենամ կերթամ իմ երկիրը, այս խօսքերն ասելիս սրտի նեղութիւնս յայտնուեցաւ, բոլորովին ուրիշ ազդեցութիւն արել էր նրանց վարմունքն իմ վերայ, հասկացան այդ և շատ ստիպեցին որ մի փոքր էլ համբերեմ ու յետոյ գնամ, ուստի նստեցայ նորունց։ Մէկը նրանց մէջէն որ Օսմանցու մարդու բնաւորութիւնն իմացող էր ցոյց տալի իրան, մօտս եկաւ ու նստաւ – մի՛ նեղանաք, ասաց, ծանրութեամբ, Պ. Աղաբէգեանց, դուք մեր քաղքի ատադը չէք իմանում ու բոլորովին ուրիշ կերպ վերը առաք մեր ասածները, մեք շատ ուրախ ենք որ ձեզ պէս մի անձ մեր Վեհափառի հետ եկաւ այստեղ, որու կարող ենք ամեն բան պարզապէս ասել և դուք էլ ամեն բան լաւ կը հասկանաք, բայց որովհետեւ դուք տակաւին ծանօթ չէք մեր վիճակին հետ, նրա համար հարկաւոր է որ իմանաք, որ ըստ այնմ շարժիք Վեհափառի մօտ – ներեցէք, ասացի, այդ պարոնին, այսօր մի քանի անձինք իմ երեսին ասացին թէ, եթէ եկել եմ այս տեղ Ռուսաց տէրութենէն նշան ստանալու և վատ մարդկանց հետ բարեկամանալով Կաթողիկոսին սըխալեցնելու, լաւ կանեմ որ վերը կենամ ու յետ դառնամ քաղաքս։ Այս ասելով ինձ ուղղուած անստորագիր նամակի խօսքերն էի կամենում ասել։ Նամակն էլ ցոյց կը տայի սրանց, թէ որ ինձ համար անարգանք համարած չլինէի, ընդհակառակն բոլորովին նախապաշարուած լինելս ու ամենեւին նամակին դիտաւորութիւնը հասկացած չլինելս պիտի իմացունէի նրանց չգիտութեամբ, ուստի լուռ կեցայ և լաւ արի։ Այդ պարոնը պարզ ասաց թէ, այդ բաներն ինձ ասող անձինք ամենեւին չեն սխալուել և լաւ են արել, որ ասել են, ուստի մենք էլ կասենք ասաց, որ Վեհափառին ասէք,

թէ զդոյշ կենայ Զալալեան Սարդսից, Լորիս Մելիքոֆից, Գուրկենբէգեանցից, Թումանեացից, Սուրէնեանցից Թահիրեանցից և ուրիշ նրանց նման մարդկանցից։ Դրանք տէրութեան մարդիկ են և միշտ վեհափառին կը յորդորեն, որ Տէրութեան կամքի համաձայն վարուի, տէրութեան կամքն է, որ վեհափառը Էկզարխին ոտքին գնայ, այդ կը նշանակէ Ռուսաստանի մէջ կրօնափոխութիւն – ի՞նչ ե՛ք ասում, ասացի զարմանքով և բարկութեամբ, – հրամել է՛ք, ասաց, Ռոսի տէրութիւնը կաշխատի որ Հայոց Եկեղեցին իր Եկեղեցւոյն հետ միացնէ, Հայքն Ցունադաւան լինին, որպէս զի իր ազդեցութիւնը Տաճկաստանի մէջ զօրանայ – այդ անհնարին ու անկարելի բան է – բայց ոչինչ չկայ, ասաց, անկարելի մեր տէրութեան համար, մեր քնած ժամանակ, նա ամեն բան կը շինէ և գլուխ կը բերէ, երբ մենք քնից կը զարթնենք կը տեսնենք, որ բանը բանէն պրծել է։ Հասկացար, – բայց մեր Կաթողիկոսը ողջ ողջ կը մեռնի այդպէս բան չի անել ասացի, – կեցցէ՛, կեցցէ՛ նա, ուրեմն, պղաւեցին ամենքն էլ միաձայն։ Իմ զարմանքը տանում էր, ու ես էի սկսում ծիծաղել նրանց վրայ։ Բայց վերջ արաւ նորէն խօսքը այն պարոնը – չը-խաբուի՛ք ասաց, Պօլսեցի՛ք միամիտ են, ախտոս որ Եւրոպիոյ դիթին տակն են, բայց ամենեւին քաղաքագիտութիւն չունին – ճշմարիտ ես, ասացի – ուստի կարող են խաբուիլ – այ՛ քեզ օրինակ ասաց, ձեր Գէորգ Պատրիարքը մի թուղթ է ստորագրել. և Լորիս Մելիքոֆի ձեռին է տուել մեր փոխարքային ներկայացնելու, թէ և ես չտեսայ այդ թուղթը, Ռուսերն ասացին թէ Հայոց և Ռուսաց միաբանութեան թուղթն է – յետոյ հարցուց ինձ թէ դու տեսե՞լ ես – ո՛չ ասացի, ամաչելով – այ, ասաց ինչպէս թագուն բաներ կանեն նոքա, – Պօլսեցի՛ք դիտե՞ն, – կարծեմ ոչ – հապա ի՞նչպէս կը ստորագրեն, ասաց – մի ուրիշն էլ հարցուց թէ Կաթողիկոսը դիտէ – ամենեւին ոչ ասացի, թէ որ նա դիտենար, ես էլ պէտք էր որ դիտենայի – վերջապէս խօսքը դարձաւ Այվազովսկու և Զալալեանցին վրայ, մի ժամ ամբողջ խօսեցան այդ անձինքների նշանակութեան վրայ Ռուսաց տէրութեան առջեւ, որոնք դուրս եկան, ոչ թէ Հայոց ազգի լուսաւորութեան համար աշխատողներ, այլ խաւարեցուցիչներ։ Զար-

մանալով զարմացայ – թէ որ մեղ չէք հաւատալ ասացին, խնդրեմ ինք յատուկ ձեռամէ, որ ձեր խելքովն նկատէք ու բանի խորը տեսնէք – միթէ դէմ կեցա՞ւ այսօր, Ջալալեանցն ու Այվազեանցն վեհափառի Էկզարխին անելու այցելութեան, ասացին – ո՛չ պատասխանեցի – պէս ի՞նչպէս կարելի է որ 1800 տարուայ Հայրապետների յաջորդն, մի մեծ Եկեղեցւոյ և Աշխարհի Կաթողիկոսն դնայ տասներկու տարուայ առաջնորդի ոտքին – այդ քաղաքականութիւն է՞ միթէ, եթէ ոչ վասկութիւն – բոլոր արիւնս երակներումս շարժեցաւ, դլուխս տաքցաւ, ոչ պղամեցի եթէ ես Աղաբէկեան Մարկոսն եմ, Մատթէոսը այդ Էկզարխին մօտը պիտի չդնայ, միայն թէ ես մեռնիմ յառաջ։ Կեցցէ՛, կեցցէ՛, պղաւեցին մեր անծանօթ բարեկամները. սիրտս կենդանացաւ, հոգիս ոգեւորուեցաւ, հիմա կերթամ, ասացի, Կաթողիկոսին ոտքին կընկնիմ, ձեռներն ու ոտները պաչ կանեմ, կաղաչեմ կը խնդրեմ որ չլինի թէ Էկզարխին այցելութեան դնայ, ես գիտեմ մեր Ցաճկաստանի մարդու սիրտը կակղեցնել, նա ղդայուն սրտով մի մարդ է, իմ խնդիրքը կը կատարի, նա մանաւանդ երբ վտանգը աչքով տեսնէ։ Այս խօսելիս մէկն ասաց իմ քամակէն – Պ. Աղաբէկեանց, մի բան եմ ասում քեզ, մի ասա՛ ինձ, էդ Մատթէոսն իր քթին չափ մեծ մարդ է՞ – այդ հարցումի վրայ ամենքս էլ ծիծաղեցանք, պատասխանեցի, թէ իրաւ դիմը մեծ է, բայց ինքը փոքր մարդ է և լաւ սիրտ ունի, մինչեւ այն ժամանակ յիրաւի ես էլ համոզուել էի որ Մատթէոսը լաւ սրտանի մարդ է և իր ազգի և եկեղեցու վրայ սէր ու գութ ունի։ Հէնց այս ժամուս կերթամ ու կը խօսիմ Կաթողիկոսին ասացի, թողէք ինձ – մեր էլ ուղածն էդ է, ասացին, վեր կաց դնա և ի՞նչ որ իմացաք, ի՞նչ որ տեսաք, ու ի՞նչպէս որ լսեցիք վեհափառին մի առ մի ասացէք, ամենեւին, ա՛հ մի՛ ունենաք, դուք Օսմանցու մարդ էք, ձեզ ոչինչ չեն կարող անել – թէ գուցէ ինձ սպանեն, թէ գուցէ Կաթողիկոսն իր մօտէն վռնտէ, դուրս հանէ ասացի, պէտք է որ աշխատիմ ու չթողնեմ որ Էկզարխին այցելութեան դնայ, դուք կը տեսնէք իմ աշխատանքի հետեւանքը – սեւագլուխների չվստահիք, ասացին, մանաւանդ Ջալալեանցին, նա քեզ կը խաբի, ինքնիրան քեզ ազդասէր

ցոյց կը տայ, քեզ պաշտօն կը խոստանայ, մեր վրայ վատ կը խօսի, քեզ իր կողմը քաշելու համար, չըլլինի որ հաւատաք նրան – լաւ, լաւ, ամեն բան խմացայ, նոր մի Նիքոլ Թորոսովիչի հետ գործ ունի մեր Մատթէոսը, ասացի – ապրիք, Աղաբէկեանց, հէնց էդպիսի մի բան, ասացին, սրտի դոհունակութեամբ, բոլոր մեր յոյսը ձեր վրայ է, մեզ հետ և Հայոց ազգի հարազատ զաւակները, մեզանից ոչ մէկը չի կարող գնալ Վեհափառի մօտ և այս մասին խօսել. նա կարող է, անդիտութեամբ մեզ մատնել, յետոյ մեր բանը բիս կը լինի բայց դուք նրա մարդն էք, ձեզ համար ոչ ինչ ահ չը կայ – տէր լաւ թողէք, որ գնամ, ասացի ու դատակս վեր առայ, ամենքին ձեռները թոթվելով մնաք բարեւ ասացի, դոհ սրտով և ոգեւորուած ուղիղ դէպի վանքը վազեցի։ Օրը մթնացել էր ու ճրագվարումի ժամանակ էր, ճանապարհին սկսայ մտածել, ես ինձ ու ինձ ասել, Մատթէոսն որ մերժելու լինի իմ խնդիրքը, և այդ վասակների կամքը կատարէ, իմ վիճակն ուր կերթայ, ի՞նչ երեսով ես այս քաղաքը պիտի մանգամ, այդ մարդկանց ի՞նչպէս պիտի երեւնամ. էլ իմ նշանակութիւնը քանի փող պիտի ածէ, որոնց պէտք է ծառայել, Ջալալեանայ եթէ ոչ Մատթէոսին, որ կը նշանակէ Հայոց ազգին. հապա՞ յետոյ ինձ մի ճնաս որ հասնի, ի՞նչպէս պէտք է պրծնիլ, ի՞նչ կուզէ թող լինի ասացի, ինքնիրանս, Թիֆլիզ հասայ թէ չէ՝ մի երեւելի մարդ այդ բաները ականջումս փչեց։ Այսօր մի անստորագիր նամակ մի և նոյն բառը կը հասկացնէ ինձ, աւելի մանրամասն։ Սրանք, այս դեռ ինձ համար անծանօթ մարդիկ նոյն և միդիտմունքն ու զգացմունքը կը յայտնեն ինձ, չըլլինի թէ անստորագիր նամակի հեղինակներն էլ սրանք լինին. բայց թէ նրա՞նք են, ի՞նչ հարկաւոր էր, նորէն հաւաքուիլ այս բանիս համար ու ինձ խօսք հասկացնել, ո՛չ, այդ նամակի գրողներն էլ ուրիշները պէտք է լինին, կը նշանակէ որ այս խորհուրդ Թիֆլիզու ժողովրդին մէջ հասարակաց է. մի կամ երկու մարդու զգացմունք կամ դիտմունք չէ, ուրեմն այս ժողովրդի ձայն է, որ ճնշուած է, և չէ իմանում ի՞նչպէս դուրս մղուի և մինչեւ իմ կամ Կաթողիկոսին ականջին հասնի, այլ միայն այս միջոցն է գտել։ Այս խորհրդածութեամբ

ապահոված և մտադիր եղած հաստատամտութեամբ ամեն անյաջողութիւն կամ դիմադրութիւն արհամարհելու, Կաթողիկոսի սենեկի դուռը բաց արի ու ներս մտայ։

Մատթէոսը Անդրէաս վարդապետին հետ միասին իրիկնահայ էր անոյշ անում. եկո՛ ծո՛, էյէր բան չես կերեր մէկ լոխմա բան կեր, ասաց, ուրտեղուանքը սիւրթմիշ կընես կոր, հէ՛ Իզմիրցի – չէ՛ վեհափառ տէր, սիւրթմիշ միւրթմիշ ըրած չունիմ, ասացի ու մօտը գնացի աջը ձեռիս արի համբուրելու – տէ՛ շուտ ըրէ հաց պիտի ուտեմ, ասաց. աջը համբուրելուց յետոյ, ծունկն էլ համբուրեցի. սա՛ Իզմիրցի Իզմիրցի, ասեց ու ձեռքովը գլուխս բռնեց, այն ժամանակ չոքեցի և ոտքն էլ համբուրեցի. ծո՛ ի՞նչ կընես կոր, պօռաց – ամա՛ն վեհափառ տէր, մի խնդիրք ունիմ, և այս խնդիրքն իմ ամենամեծ խնդիրքն է, կուզեմ որ կատարես – ի՞նչ է ի՞նչ է, ըսէ՛ տեսնեմ, մերաքս ելաւ ի՛ւֆ, ասաց – չէ՛ վեհափառ տէր մերաքի ժամանակ չէ պէտք է մտիկ անես ինչ որ պիտի ասեմ։ Այսօր ինձ երկու տեղէ հրաւիրեցին – է՞նչ ընեմ ես, ասաց – մտիկ ըրէ վեհափառ տէր, այս երկու տեղերն էլ շատ մարդիկ հաւաքուել էին աստիճանաւորներ, քաղաքացիներ, ինձ ասացին սրանք որ դամ քո վեհափառութեանը իրանց կողմէն ասեմ՝ թէ դուք Հայոց ազգի հոգեւոր թագաւորն էք, և բացի Աստուծմէ ոչ մէկէ ահ չունիք և ոչ մէկի խօսքին մտիկ անելու պարտաւոր չէք, ոչ Լօրիս Մելիքօֆին և ոչ Զալալեանցին, ոչ մէկին. դուք ի՞նչպէս գիտէք, Հայոց ազգի և եկեղեցու օգուտն ինչ որ ցոյց կը տայ ձեզ անել նոյնպէս պէտք է անէք – ատոնք քու խօսքերն են, ասաց, Իզմիրցի դու Լօրիս Մելիքովին, Զալալեանցին չսիրեցիր – չէ՛ չէ՛, վեհափառ տէր այդպէս չէ, ինձ ասացին որ նրանք քեզ պիտի խաբեն ու Ռուսաց առաջնորդին ոտքին պիտի տանին. կընի՞ այդ բանը կը վայելէ, որ մեր սուրբ Լուսաւորչի յաջորդը, Ռուսի առաջնորդին ոտքին դնա, վեհափառ տէր – պէ՛ հայտէ զէվզէք, ասաց Մատթէոսը մեզ, դու բոլիթիքա չես գիտեր, պէտք է որ գնամ – ի՞նչ, վեհափառ տէր, ասացի ինձ մեռցուր յառաջ, յետոյ ուր տեղ կուզես գնա, այդ անկարելի բան է. բոլոր թիֆլիզեցիք լսել են որ Ռուսի առաջնորդին պիտի գնաս եղել չորեքշաբթի, ուստի պատրաստուել են քո ա-

ուսալան յետ դարձունել թէ որ առապաճին քեզ այն տեղ տանելու որ լինի – սուս եղիր դու չես գիտեր կոր ի՞նչ կըսես կոր, ասաց մեզ Մատթէոսը – արցունքն աչքերէս կաթեցաւ, կատղում բրբռում էի, պիտի տրաքուէի, հասկացաւ իմ վիճակը Մատթէոսը, բայց որովհետեւ առաւօտուն նշանի մասին իրան կծել էի, ուզում էր ինձ տանջել և մի կերպով վրէժխնդիր լինել-դու չոճոխ ես, ասաց. Իզմիրցու դուխ ու նիս խենդ ֆրանկսըղ Ոսկանեանի նման. կը ճանչնաս հաճի Օծկանի տղան Ստեփանը, Հայկը, անի իմ զաւակս է. նամբլ շակեց ան Կարապետ վարդապետին, Ա.յվազովսքիին, աֆերիմ զաւակս. ամա փէք տաք գլուխ է իշտէ դուն անոր էշն (նման) ես Զալալեանցը չես սիրեր... «Վերհափառ տէր, թողնք այդ խօսքերը հիմա, ի՞նչ կասեմ, մի մոլիկ արա, այդ մարդիկը (Թիֆլիզեցիք) ասում են որ եթէ Էկզարխին գնալու լինիս, մեր հաւատը փոխած կը լինիս, օրինակի համար Պօլսոյ Պատրիարքը ընտրուելէն յետոյ վեր կենայ քաթոլիկներին կամ բրօթէսթանթներին պատրիարքին որ գնայ չվայելեր, այնպէս էլ քեզ չվայելեր եղել Ռուսի առաջնորդին գնալ-տէ՛ տխմախ սուս եղիր դուն չես գիտեր, ասաց, այդ տխմախ բառը ինձ վիրաւորեց, բայց սաստիկ վիրաւորեց, վեր կացայ. էհ դուք գիտէք, Վերհափառ տէր, ասացի դառն սրտով. յետոյ կը զղջաք ձեր արածի վրայ, ես իմ պարտքը կատարեցի, դուք էք պատասխանատու ազգի առջեւ. Անդրէաս վարդապետը որ սեղանէն վեր էր կացել ներս մտաւ ու ինձ աչքով նշմարանք արաւ, ասել ուզեց որ կարճ կապեմ, ես էլ իմ յոյսը դրա վրայ դրի ու միւս մեզ հետ եկող եպիսկոպոսներին ու վարդապետներին. եթէ ես չեմ կարող համոզել, նրանցմով դոնէ յաջողիմ խօսք հասկացնել այս մարդուն, ասացի ինքն իրանս ու սենեկէն դուրս եկայ. Կաթողիկոսը խահվէն խմեց ու յետոյ պառկեցաւ. Անդրէաս վարդապետին ամեն բան հասկացուցի իբրեւ քաղաքի մէջ եղած և ամենքին յայտնի տարաձայնութիւն, նա մեզ հանդարտացուց և ապահովցուց-դու քո բանդ նայիր ասաց. հասկանում եմ որ ճշմարիտ ես, ես ուրիշ մարդէ էլ լսեցի այդ բաները. նա դիտմամբ քեզ հետ այնպէս կը վարուի, բայց ես քեզ երաշխաւոր կը լինիմ որ Էկզարխին այցելութեան չգնալ-Աստուած

տայ, ասացի, ապա թէ ոչ կորած ենք ու կորած։ Մտքումս դրի որ միւս օրը Մակար եպիսկոպոսին և Անդրիանուպօլսոյ Սարգիս եպիսկոպոսին ու Թէոդորեան Յարգիս վարդապետին բանը հասկացնեմ ու իրանց միջնորդութիւնը խնդրեմ այս մասին նրանց համոզելով. բայց խաբուում էի, իմ եռանդն ինձ ուրիշ կերպ էր մտածել տալի, Մատթէոսին չէի ճանաչում, նրա համար էլ չէի հասկանում նրա վարմունքը ինձ հետ, նա ինձ բաղմութեան առջեւ ճակատէս պաշ էր անում, զաւակս ասում էր, այնպէս ցոյց էր տալի որ ինձմէ խիստ դոհ է ու առանձին մի սէր ունի իմ վրայ Իզմիրցին, Իզմիրցին ասելով, ամենքին յանձնառարութիւն էր անում և շատ բան մտերմաբար ինձ հաւատում էր և իմ խօսքին մտիկ էր անում, բայց այդ երիկուն ուրիշ կերպ վարուեցաւ ինձ հետ, ես ինք իրանս ասում էի, որ անպատճառ նշանի համար խառվեցուցի այս մարդն ինձ դէմ, բայց ինչ անեմ ասում էի, ոչ նրա սէրը, ոչ նրա լաւ կարծիքը կուզեմ իմ վրայ, թէ որ նա Լիկզարխին կերթայ, ես էլ նրան մնաս բարեւ կասեմ, կառնեմ դլուխս կերթամ։ Այսպէս սիրտս վրդոված դէմքս այլայլած դնացի Մարկոս աղայի տունն որ ինձ էր սպասում իրիկնահացի համար. Այդ ո՞ւր ես, ասաց, ու սկսաւ ջանալ բերնեմէս բան առնել, ես էլ իմ դերը փոխեցի, վերհափառի մօտն էի, ասացի, Պօլիս և Պօլսոյ կերակուրներն է ցանկանում, ասացի, այս տեղի ոչ մարդկանց է հաւանում ոչ կերակուրներին ինչ պիտի անենք չենք դիտել։ Այսօր ո՞վ եկաւ չայի ժամանակ հարցուց, չեմ իմանում-Լօրիս Մէլիքովի մօտ դնացիր, չէ վաղը կամ միւս օրը պիտի դնամ-կաթողիկոսը Լօրիս Մէլիքովին կը սիրէ-ի հարկէ կը սիրէ, ինչու պէտք է չսիրէ. Ցետոյ խօսքը դարձաւ Իզմիրու վրայ և ընտանեկան խօսակցութեան։

Պիտի շարունակուի։

ԽՄԲԱԳԻՐ-ՏՆՕՐԷՆ
ՄԱՐԿՈՍ ԱՂԱԲԷԳԵԱՆ

Կ. ՊՕԼԻՍ, ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՌՈՒԲԵՆԻ Ց. ՔԻՒՐՔՃԵԱՆ